

ԳԱՆՁԱՍԱՐ

ՔՐԻՍՏՈՍ ԵՐԱՆՈՒ ՄԵՐ ԱԶԳԱՐԻ ԱՊՈՍՏՈՂՈՍԱՐ ԳՐԵՍՈՒՄԵՐԻ ՌԵՒԵՐՏ

ՅԱՒԵՂՈՒԿՈ
March 2022



ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՄԵՆԸ ՍՈՒՐԻՈՅ ԱՐԱՐ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՈՒ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԶՕՐԱԿՅՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՃԻԳՈՎ ՊԻՏԻ ՎԵՐԱՇԻՆԵՆԸ ՏԵՐ ԶՕՐԸ, ՀԱՅՈՅ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՏԱՏԵՂԻՆ, ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀԱՆՁԱՏԻՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ ՀԻՄՔԸ»



ՅԱԿՈԲ ՏԵՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ. «ԹՈՂ ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԸ ԻՄԱՆԱՅ, ՈՐ ՏԵՐ ԶՕՐԵՆ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐՈՒ ՄԵԱՅՈՐԳԱՅԻ ՊՈՂՊԱՏԵԱՅ ՎՃՈՍԿԱՄՈՒԹԵԱՄԲ ՎԵՐԱՅԻՆԱՏ ԵՆԸ ՄԵՐ ՊԱՅՔԱՐԻ ՀԱԻՔԱԿԱՆ ԿԱՄՔԸ»



ՖԱՏԷՆ ՆԱՃԱՐ. «ՊԻՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԻՆ ՍՈՒՐԻԱՆ ՈՒ ԻՐ ԺՈՂՈՎՈՐԴԸ ՈՒ ՊԻՏԻ ՎԵՐԱԾԱՂԿԵՅՆԵՆ ՄԵՐ ԵՐԿԻՐՆ ՈՒ ՀԱՅ-ՍՈՒՐԻԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ` ՏԵՐ ԶՕՐԸ»



ՆԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 107-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՊԱՆՏՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՄԵՐ ԵՐԹԸ ԿԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵՆՔ

Սիրելի՛ հայրորդիներ,
Հայոց Ցեղասպանության 107-րդ տարելիցին, յարգելով մեր 1,5 միլիոն սրբադասուած նահատակներուն յիշատակը, պահանջատիրական մեր երթը կը վերանորոգենք, մինչեւ հասնինք Հայ Դատի արդար լուծման:

1914-1915 թուականներուն, Համաշխարհային Ա. Պատերազմի ընթացքին, աւելի քան 1,5 միլիոն հայեր սպանկի ենթարկուեցան թուրքին կողմէ: Օսմանեան Կայսրութիւնը թէ՛ հայ ժողովուրդին, եւ թէ՛ այլ փոքրամասնութիւններուն նկատմամբ մարդկային մեծ ոճիր գործեց: Թուրք ղեկավարներու հրամանով եւ գիւնդներուն ձեռամբ յաջորդական կերպով Ցեղասպանութեան ծրագիրը ի գործ դրուեցաւ եւ զանգուածային կերպով հայ ազգը բնաջնջումի ենթարկուեցաւ: Հետեւաբար, 18-րդ դարու աւարտին սկիզբ առած հալածանքները, կողոպուտը, բռնաբարութիւնը, անարդարութիւնը, բռնի ուժի գործածումը յանգեցուցին 1915-ի Հայոց Ցեղասպանութեան:



Օսմանեան Կայսրութեան տարածքին, թուրքին կողմէ մեր եկեղեցիները քանդուեցան, գիւղերն ու քաղաքները եւ հայկական համարեա՛ բոլոր կառոյցները կործանեցան: Հայ ժողովուրդը պայքարեցաւ իր ինքնութեան եւ ազատութեան համար: Այս իսկ պատճառով ան ենթարկուեցաւ ամեն տեսակ չարչարանքի, հալածանքի եւ վերջապէս հաւաքական ջարդի: Թուրքը ուզեց հայ ժողովուրդը բնաջնջելով արմատախիլ ընել զինք իր պապենական հողին եւ մարել անոր արդարութեան եւ պահանջատիրութեան ձայնը:

Հայ ընտանիքներ բռնի կերպով քսուողներու դէպի Սուրիոյ հիւսիսային անապատներ, ուր ողջակիզուեցան եւ նահատակուեցան վասն հաւատքի եւ ազատութեան: Տեղահանութիւնը եւ Հայոց Ցեղասպանութիւնը նախօրոք կազմակերպուած էին թուրքին կողմէ: Ամբողջ ժողովուրդ մը իր ազգային, եկեղեցական հարստութիւններով թաղելու եւ ջարդելու փորձ մըն էր Ցեղասպանութիւնը: Հազարաւոր որբեր անտուն եւ անձողք մնացին: Հայոց աշխարհը անմարդաբնակ դարձաւ, այլ խօսքով՝ ամայացաւ: Հայ ժողովուրդին հետ հալածուեցան նաեւ հայ հոգեւորականները, որոնք իրենց խաչը կրելով նախընտրեցին նահատակուիլ, քան յանձնուիլ եւ նահատակութեամբ՝ յաղթանակի, յարութեան եւ կեանքի վկայութիւն տուին: Հայ մայրեր եւ կիներ իրենց արժանապատուութիւնը պահելու համար իրենց զիրենք Եփրատ գետին մէջ նետեցին:

Մեր ուշադրութիւնը սեւեռելով Հայոց Ցեղասպանութեան ետին թաքնուած պատճառներուն վրայ, կրնանք հաստատել թէ թրջական այլատեսացութիւնը Թուրքիոյ քաղաքական խաւն իսկ հայ ազգի ոչնչացման առաջնորդած է հետեւեալ նկատառումներով.

- ա. Օսմանեան Կայսրութեան մէջ հայերուն աշխատունակ ներկայութիւնը եւ տնտեսական, ուսումնական, կրթական, բժշկական եւ այլ ոլորտներէ ներս բարձր դիրքերու հասնիլը:
 - բ. Անտելութիւնը այլ կրօն դաւանողներուն նկատմամբ: Այլ խօսքով՝ կրօնամոլութեան ալիքի բարձրացումը Օսմանեան Կայսրութեան մէջ:
 - գ. Թուրք ազգայնականութեան ալիքի բարձրացումը:
 - դ. Տնտեսական նկատառումներ, ձեռք դնելու համար հայ ժողովուրդի ազգային, անհատական եւ եկեղեցական հարստութիւններուն վրայ:
 - ե. Հայերը իրենց արժանավայել տեղը ունենի պետական գրասենեակներուն մէջ եւ պետական շրջանակներէ ներս կարելու դիրքեր կը գրաւէին: Յետ-Ցեղասպանութեան զանազան մարգերէն ներս՝ քաղաքական, բժշկական, դրամատեսային, տնտեսական, հանգրուանային կերպով հայ պաշտօնեաները փոխարինուեցան թուրքերով:
- Այս բոլոր պատճառները ուրիշ բան չեն, եթէ ոչ կողոպուտ, թալան եւ

իրաւունքներու ոտնահարում: Դէպի ջարդ տանող փուլային եւ ծրագրաւորուած ընթացք մը կար, որ թաքուն կը պահուէր Հայ ժողովուրդէն:

Նահատակ ցեղի մարտունակ գաւակներ, Հայ ժողովուրդը բնորոշուած է իր մարտունակութեամբ, պայքարելու ոգիով եւ յաղթանակներով: Ան անարդարութեան դէմ պայքարեցաւ, դիմադրեց, պաշտպանեց իր քաղաքներն ու գիւղերը: Ինչպէս կրնանք չյիշել Մուսա լեռան քառասուն օրերը, Վանի եւ Չէթունի հերոսամարտերը, Ատաւայի կոտորածը եւ հայ ժողովուրդին դիմադրութիւնը:

Հայոց Ցեղասպանութենէն 107 տարիներ ետք, պահանջատիրութեան մեր ուխտը վերանորոգելով կը հաստատենք, թէ.

ա. Հայոց Ցեղասպանութիւնը մեր յիշողութեան, ապրումներուն, անցեալին, ներկային եւ ապագային, մեր ձգտումներուն եւ տեսիլքներուն մաս կը կազմէ: Չենք կրնար մեր հաւաքական յիշողութենէն ջնջել մեր պատմութեան այս ամենադաժան փուլը:

բ. Թուրքը իրերայաջորդ սերունդներէն սորվեցաւ եւ նոր սերունդները եւս մղեց շարունակելու ոճրային արարքներով այլոց իրաւունքներուն տիրանալու քաղաքականութիւնը:

գ. Թուրքը ուզեց ծածկել իր ոճիրները: Տեր Չօրը թուրքին համար հանդիսացաւ այն վայրը, ուր հայը պիտի թաղուէր աւազներուն տակ ու իր մեծ ոճիրը՝ Ցեղասպանութիւնը պիտի մոռցուէր:

Ինչպէ՞ս կրնանք մոռնալ կազմակերպուած ջարդը, մեր հայ մայրերուն եւ քոյրերուն նկատմամբ կատարուած բռնաբարութիւնները եւ անմարդկային վերաբերմունքը, որոնք Ցեղասպանութիւն համարուած են ՄԱԿ-ի իսկ համաձայնագրով: Թուրքը իր ցեղային խտրականութեամբ, ատելութեամբ եւ ցեղասպանութեամբ մարդկութեան միջազգային իրաւունքները ոտնակոխեց:

Կը հաւատանք, որ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը նոր ցեղասպանութիւններ կանխելու երաշխիքն է: Նման Ցեղասպանութիւն չկրկնուելու նպատակով է, որ հայ ժողովուրդը 107 տարի շարունակ արդարութիւն կը պահանջէ եւ վերանորոգելով իր ուխտը կը շարունակէ պահանջատիրութեան երթը:

Հայ ժողովուրդը 107 տարիներ, ուր որ գտնուեցաւ, բոլոր մակարդակներու վրայ պատասխանատուութեան եւ հաշուետուութեան հրաւիրեց թուրքը՝ անկէ արդարութիւն, ճանաչում եւ հատուցում պահանջելով: Հաշուետուութիւնը կարելու է ո՛չ միայն արդարութիւնը հաստատելու համար, այլ պատիժ սահմանելու յանցագործներուն նկատմամբ: Թուրքը անպատիժ պետք չէ մնայ: Հայ ժողովուրդը 107 տարիներ հետապնդեց Հայ Դատը՝ կանխարգիլելու նոր ջարդերու կազմակերպումը եւ հաշուետուութեան հրաւիրելու ոճրագործները:

Օրհնեալ ըլլայ յիշատակը սրբադասուած մեր նահատակներուն: Հայաստան, Արցախ եւ Սփիւռք պայքարունակ ոգիով եւ միասնական ջանքերով պիտի շարունակենք պահանջատիրութեան մեր երթը, մինչեւ վերատիրանանք մեր արդար իրաւունքներուն:

**Կիրակի, 24 Ապրիլ 2022
Մասիս Եպս. Զօպունեան
Առաջնորդ Հայոց Բերիոյ Թեմի**

ԱՄԵՆԱԿԱՐՈՂԻՆ...

Սկիզբ՝ էջ 12

միակին կողմէ, որ կեանքի կոչած է բոլորս:
Ինչպէս մեր արիւնը պարտաւորութիւն ունի մեր մարմինը ապրեցնելու, նոյնպէս ալ մենք պարտական ենք ապրեցնելու եւ իրականացնելու մեր նախնիներուն նպատակները ու կենդանի պահելու անոնց երազներն ու բաղձանքը մեր եւ մեր յաջորդներուն մէջ:
Իբրեւ Եղեմէն ճողոպրած, հրաշքով փրկուած հայու յաջորդներ, բնագրաբար մեր ներսիդին կը կրենք եւ կը զգանք մեր նախապապերու տառապանքն ու յոյզերը: Իրաւունք չունինք յուսահատելու, մոռնալու կամ անտեսելու անոնց եւ մեր դատը, մեր կորուսեալ պապենական հողերը:
Մենք նաեւ մարդկութեան մեծ ընտանիքի մէկ բջիջն ենք, որ նոյն արարիչը ունինք, այն արարիչը, որ մարդոց ապրելու բնականութեան սահմաններ ճշդեց: Ստեղծուած ենք իր պատկերով, մեր ձեռքերն ու ոտքերը անոր ծրագիրները իրականացնելու համար պետք է շարժին եւ շարունակեն ծառայել անոր եւ իր կամքը կատարեն այս երկրին վրայ:
Այս գիտակցութեամբ եթէ ապրինք, օր ըստ օր պիտի փոխուին մեր պատմութեաններն ու դիմագիծերը, մինչեւ որ հասնինք կատարելութեան:
«Եւ եթէ հանդիպինք մեր նախապապերուն, ուրեմն մօտ ենք արդէն մեր ապագային» Ռ.Դ.:

Խմբագրական

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՆԱՍՏԱՏՈՒՄԸ ԳԼԽԱԲՈՐ ԵՐԱՇԽԻՔՆԷ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱՇՏԵՑՄԱՆ

Յաճախ ժողովուրդներու հաշտեցումը հաւասար հարթակի վրայ կը դրուի պետութիւններու դիւանագիտական յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին հետ: Իրականութեան մէջ անոնք տարբեր գործընթացներ են, հակառակ անոր որ թրջական կողմը յաճախ կը փորձէ նոյնացնել զանոնք՝ ենթադրելով, որ պետութիւններու դիւանագիտական յարաբերութիւնները կրնան ժամանակի թաւալումով պատմագետներու վճիռին թողուլ իրաւաքաղաքական բնոյթ կրող ազգի մը դատն ու պահանջատիրութիւնը, մանաւանդ եթէ այդ յարաբերութիւնները կը յաջողին աստիճանաբար տնտեսական կախեալ վիճակ ստեղծել Թուրքիայէն:

Ոմանք, ցաւօք, կուլ կու տան այս ծուղակը՝ յարաբերութիւններու կարգաւորումէն ակնկալելով տնտեսական ապաշրջափակում, փորձելով Յեղասպանութեան ճանաչման ու հատուցման հարցը թողուլ Սփիւռքին՝ պետական մարտավարութեան թելադրողութեամբ:

Հայոց Յեղասպանութեան ճանաչումն ու դատապարտումը երկար պայքարի ու դիւանագիտական, պատմագիտական փաստարկներու պատրաստութեան, միջազգային ընտանիքին ու տարբեր երկիրներու խորհրդարաններուն ներկայացուած պահանջատիրական աշխատանքի արդիւնք էր, որ վերջին տարիներուն ամրագրուեցաւ նաեւ իսլամական կրօնք դաւանող առաջին երկրին Յեղասպանութեան վկան հանդիսացող Սուրիոյ խորհրդարանին, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներու նախագահին կողմէ:

Դիւրին չեղաւ հարիւր տարի շարունակ խորհրդարաններու, ծերակուտականներու, նախագահներու հայ ժողովուրդին դատը ներկայացնելն ու արդար ճանաչում պահանջելը:

Հայ Դատի գրասենեակներ շարունակական աշխատանք տարին, հայ երիտասարդներ իրենց կեանքն իսկ նուիրաբերեցին արդարութեան բազինին, Հրանդ Տինք իր գրիչով պայքարեցաւ, իսկ աշխարհի չորս ծագերուն բողոքի ցոյցերու, պատմագիտական գեկոյցներու եւ Հայաստան-Սփիւռք միացեալ անկոտրում պայքարին շնորհիւ աշխարհաքաղաքական տարբեր հարթակներու վրայ ճանչցուեցաւ ու դատապարտուեցաւ Հայոց Յեղասպանութիւնը՝ բովանդակութենէ պարպելով Թուրքիոյ ուրացման քաղաքականութիւնը:

Թուրքիա չկրցաւ կանխել ճանաչման այս ալիքը, սակայն անոր հետեւանքներէն խուսափելու ռազմավարութիւն մշակեց: Ան իր աշխարհաքաղաքական ազդեցութիւնը ընդլայնեց, Ատրպեյճանին նեցուկ կանգնելով ու Հայաստանին յարաբերութիւններու կարգաւորման ուղղելով:

Այս բոլորին ի տես, յատկապէս Հայաստանի քաղաքական ներկայ գարգացումներուն լոյսին տակ, շատեր սկսած են Յեղասպանութեան ճանաչումը ազդու զէնք չհամարել այնքան ատեն, որ Թուրքիան կը մերժէ ճանչնալ զայն, իսկ միջազգային ընտանիքը խօսքի սահմաններէն անդին չ'անցնիր:

Հայոց Յեղասպանութեան ճանաչումն ու արդար հատուցու-

մի հայ ժողովուրդին պահանջատիրութիւնը անժամանցելի իրաւունքներ են: Թուրքիան դժուար թէ հասնի հանդուրժողականութեան այն մակարդակին, որ ճանչնայ ու սրբագրէ պատմական այս ոճիրը: Միայն քաղաքական ու դիւանագիտական ճնշումով,

աշխարհաքաղաքական պատեհ առիթին միջազգային ընտանիքը կրնայ պարտադրել Թուրքիոյ, որ վերահաստատէ պատմական ճշմարտութիւնը ու հատուցում կատարէ: «Արդարացի Հատուցում» խորագիրը կրող միջազգային իրաւաբաններու ուսումնասիրութիւնը յստակօրէն բացատրած է իրական բոլոր չափանիշներն ու օրէնքները, պահանջող կողմերու իրական հանգամանքն ու կարելիութիւնները Հայոց Յեղասպանութեան արդար հատուցման առումով:

Ուստի աշխարհաքաղաքական փոփոխութիւնները, արցախեան իրավիճակն ու Սփիւռքի տարբեր դժուարութիւնները պետք չէ մթազնեն պահանջատիրական մեր համազգային յանձնառութիւնը, կարճ ժամկետներու մէջ ակնկալելով իրաւաքաղաքական բնոյթ կրող հայութեան դատին լուծումը:

Հայոց Յեղասպանութեան համահայկական հռչակագիրը այս հարցը կը պարզէր իր բոլոր մանրամասնութիւններով, շեշտելով յատկապէս, որ Թուրքիոյ կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչումը եւ դատապարտումը կարելոր մեկնակէտ կրնան հանդիսանալ հայ եւ թուրք ժողովուրդներու պատմական հաշտեցման գործընթացին համար:

Հայ ժողովուրդի յիշողութենէն կարելի չէ ջնջել պատմական աղէտը, որովհետեւ անոր հետեւանքները կը շարունակէ կրել ան:

Կարելի չէ Տեր Զօրը քանդելով ջնջել յիշողութիւնը, որովհետեւ յիշողութիւնը քարեղէն էութիւն չէ, ոգի է, պատմութիւն եւ արդարութեան հաստատման կանչ:

Յիշողութիւնը ապահովութեան եզրերը կը սահմանագծէ ու վտանգները կը յուշէ:

Յիշողութիւնը փորձառութիւն է, պահանջատիրութեան մղող ազդակ: Յիշողութիւնը անցեալ չէ պարզապէս, անցեալի սխալները սրբագրելու չդադրող ձայնն է մեր մէջ:

Ուստի կարելի չէ կասեցնել պահանջատիրութիւնը, այլ անոր զէնքերը փոխելն ու իւրաքանչիւր ժամանակաշրջանի յարմարցնելն է եականը:

Հայաստան-Սփիւռք տարբեր խրամատներու մէջ չեն մարտնչիր այս առումով, այլ ներդաշնակ, զիրար ամբողջացնող մարտավարութիւն կ'որդեգրեն, պետք է որդեգրեն՝ չիյնալու հաշտեցման ու բարի դրացիութեան ծուղակին մէջ:

Սուրիահայութիւնը ականատեսը եղաւ Սուրիա-Թուրքիա բարիդրացիական յարաբերութիւններու արդիւնքին, տնտեսական զարգացում խոստացող այս յարաբերութիւններուն Սուրիոյ տնտեսութեան հասցուցած վնասներու ծաւալին: Սուրիոյ երկարած բարիդրացիական թրջական նոյն թաթը տակաւին սուրիական պատերազմին յառաջացուցած վերջին կոտորածները կ'երկարածէ ու անոր սպիացման դեմ ոգի ի բռն կը պայքարի:

«Գ.»



ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԸ ԵՒ ԱՆԻԻԸ ՇՐՋԵԼՈՒ ԿՐԱՄԱՅԱԿԱՆԸ



Ս. Սուսուտժեան

Մեր ազգային ողբերգությունը յաճախ կտրած է անչափելի սահմաններ: Անկախ չսկսաւ 24 Ապրիլ 1915-ին, ո՛չ ալ վերջացաւ Յեղասպանութեան, բռնագաղթին եւ մեր հայրենի հողերուն մեծ մասին բռնագրաւման կնքումով (մեզ մէ անկախ որոշումներով ու համաձայնագիրներով): Մեր ազգային ողբերգությունը սկսած էր 1915-էն շատ աւելի առաջ, աւելի՛ առաջ՝ քան համիտեան ջարդերն ու «կեաւուր»ներուն հանդէպ խտրական քաղաքականութեան, պետական ծրագիրներու մշակումը, շարունակուեցաւ նաեւ Յեղասպանութեան ու հողերու բռնագրաւման փուլի յաջորդ տասնամեակներուն, բազմաթիւ գիծերու վրայ կը շարունակուի մինչեւ այսօր (Թուրքիա, Արցախ եւ այլուր): Այդ ողբերգութեան վերջ տալու բազմաշերտ պայքարը կոչած ենք Յայ Դատի հետապնդում, որուն խորագիրն է հայապատկան բոլոր հողերուն վրայ հայկական պետութեան գերիշխանութեան, ամբողջական գերիշխանութեան վերականգնումը, այդ հողերուն վրայ մեր ժողովուրդին ազատ, բարօր եւ դէպի գարգացում, բարգաւաճում երթին յառաջ մղումը:

Յայ Դատի պայքարը ուներ, այսօր ալ ունի մէկ գլխաւոր հասցէ. ցեղասպան Թուրքիան, այսինքն՝ պետական ոճիր ծրագրողն ու գործադրողը: Մեր պահանջատիրութիւնը չէ սահմանափակուած լոկ Յեղասպանութեան ճանաչումով, այլ ունինք արդար հատուցման, հողային, նիւթական, մարդկային եւ մշակութային բոլոր կորուստներուն դիմաց արդար հատուցում ստանալու պահանջը: Բնականաբար, մեր պայքարը անցեալ տասնամեակներուն ունեցած է բազում ճիւղաւորումներ. Յայ Դատի նուիրեալները լայնածիր աշխատանք տարած են, համոզելու համար Թուրքիոյ նեցուկ կանգնող կամ անոր հակադրուած պետութիւնները, որպէսզի կանգնին արդարութեան՝ մեր պահանջատիրութեան կողքին, ցեղասպանը



նստեցնեն ամբաստանեալի աթոռին, անոր վրայ ճշում բանեցնեն, որպէսզի հրաժարի Յեղասպանութիւնը ուրանալու, դրժելու, կամ, լաւագոյն պարագային՝ գայն պատմաբաններու քննարկումներուն ծիրին մէջ տեսնելու ընթացքէն: Մեր պայքարը, բացայայտ կամ քուլիսային աշխատանքները, Յայ Դատի յանձնախումբերուն եւ նման միաւորներու ճիգերը քայլ առ քայլ արդիւնաւորուած են, աւելի քան երկու տարի առաջ հասան գլխաւոր բերդերէն մէկուն նուաճման, երբ Միացեալ Նահանգներու խորհրդարանի երկու տունները պաշտօնական հռչակագիրներով հաստատեցին Յեղասպանութեան ճանաչումը, իսկ Նախագահ Ծօ Պայտըն յաւելեալ կնիք մը դրաւ ճանաչումին վրայ (ասոնք բոլորովին աննախընթաց բաներ չէին, սակայն ներկայ փուլին, յաւելեալ կշիռ մը տուին մեր աշխատանքներուն արդիւնաւորման):

Այս բոլորը նորութիւն չեն քեզի համար, սիրելի՛ ընթերցող: Դուն ալ, տասնամեակներ շարունակ, հեւասպառ հետեւած ես հիմնականին մէջ ԱՐՏԱԶԻՆ ԾԱԿԱՏԻ, ԱՐՏԱԶԻՆ ԲԵՄԵՐՈՒՄ ԿՐԱՅ տարուած մեր պայքարին, կը ճանչնաս գլխաւոր եւ կողմնակի թիրախները, հասցէները (Ատրպէյճանը չենք առանձնացնել, որովհետեւ թէ՛ անցեալի եւ թէ՛ այժմու փուլին, գայն կը դիտենք համահասարճ ցեղասպանին): Եթէ մատուցել տրիտասարդ ես եւ երկարող կեանքիդ տարիներուն, անձամբ ականատես չես եղած յիշեալ պայքարի նախընթաց փուլերուն, արձանագրուած յառաջադրուածներուն, յաճախ նաեւ պարտադրեալ ընկրկումներուն, անկասկած որ այդ աշխատանքները չես չափած, այսօր ալ չես չափեր քու կեանքիդ ժամանակով: Փաստօրէն, այս պայքարը սկզբնաւորող սերունդն ու անոր դոջը բարձր պահողներ արդէն անցած են պատմութեան, ժառանգորդներուն՝ քեզի, ինծի եւ վաղը գալիքներուն փոխանցելով երթը շարունակելու առաքելութիւնը: ***

Նախորդ տողերը պարզապէս նախաբան մըն էին մեր բուն խորհրդատուութիւններուն:

Կրկնենք. մինչեւ այսօր, այսինքն՝ մինչեւ վերջին քանի մը տարիները, մեր պայքարին գլխաւոր թիրախն ու հասցէն էր ԱՐՏԱԶԻՆ ԱՇԽԱՐՀԸ, Թուրքիան եւ առաւելաբար իր գորակիցները:

Թեւեւ յաճախ անդրադարձած ենք, որ մեր ժողովուրդի իրաւունքներուն պաշտպանութիւնը շատ աւելի ընդարձակ հասկացութիւն է, կը ներառէ մեր հայրենիքին մէջ ընկերային արդար համակարգի ստեղծումը, մե-

նաշնորհներու եւ չարաշահութիւններու գսպումը, աշխատաւորին, բոլոր հայրենիք կերտողներուն քրտինքին համապատասխան՝ ապրուստի բարօր պայմաններու ապահովումը՝ ժողովրդավարութեան լիարժէք կիրարկումով, սակայն նաեւ լաւ ըմբռնած էինք, որ էականը՝ հայրենի հողին ապահովումն ու պահպանումն է, խլուած բոլոր հողերուն վերադարձը, որովհետեւ առանց հողի, առանց ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ ԵՒ ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ՅԱՅՐԵՆԻՔԻ, այլ արժէքներ գուրկ պիտի մնային սննդարար հողէ եւ ջուրէ, էական կենսանիւթ, պիտի մատուցէին իմաստագրկման:

Այդ փուլերուն (բազմաթիւ են), մեր մտքէն չէր անցած, որ պիտի գայօր՝ երբ ՅԱՅՐ ԿՐԱՅՈՒՄԸ ՊԻՏԻ ԶԳԱՅ ՅԱՅՐՈՒՄԸ՝ հայրենակից եւ ճակատագրակից հայը համոզելու, թէ ուրկէ՞ ծնած է մեր Դատը, մանաւանդ, որ նոյնինք վերանկախացումէն ասդին, շարունակած էինք եւ կը շարունակենք կրել ցեղասպանին գործնական արարքներուն անվերջանալի հետեւանքները: Յոս ալ մեր նպատակը չէ վերաշարադրել ռազմական պանծալի եւ ցաւալի դէպքերը, որոնք գլխաւոր (բայց ո՛չ առանձնակի) հանգրուանները եղան Արցախեան Շարժումին շրջապագերծումը, Սումկայիթը, Շուշիի ազատագրումն ու Արցախի Յանրապետութեան իրողական միացումը՝ մայր հայրենիքին, «Ֆութպոլային քաղաքականութիւն»ն ու վիժեցումը, ապա նաեւ՝ 2016-ի ու 2020-ի պատերազմները (իրենց տարբերելը): Դէպքերու այդ շարքը՝ մեր համապարփակ պատմութենէն անջատ, առանձնացած գարգացումներ չէին, այլ ուղղակի շարունակութիւնը՝ գէթ Ֆիտայական շարժումով սկսած ու Սարդարապատի ու այլ հերոսամարտերու հնոցներէն անցած պայքարին, որ 1920-ական տարիներէն ետք, առաւելաբար մնաց քաղաքական-դիւանագիտական քուլիսներու մէջ, մերթ ընդ մերթ ունենալով ուժական առկայծումներ: Անշուշտ չենք կրնար մոռնալ այդ տասնամեակներուն մեր ունեցած հողային նոր կորուստները՝ ստալինեան քմահաճոյքին գոհ գացած Արցախն ու Նախիջեւանը, նմանապէս ստալինեան ոճրային քաղաքականութեան ճամբով Սիպերիա պարտուած բազմահազար հայորդիները, որոնք կազմեցին ողբալի մէկ «յաւելուած»ը՝ Յեղասպանութեան:

Իսկ հիմա՛ ի՞նչ:

Յիմա հասած ենք տեղ մը, ուր մեր իրաւատիրութեան անվիճելիութիւնը խնդրոյ առարկայ դարձնող թրջական մտածողութիւնը՝ համահունչ արձագանգներ կը գտնէ... հայութեան բեմին վրայ: Երեւանի իշխանութեան բարձրագոյն դիրքերը գրաւող հայախումբեր հարց կը դնեն, թէ պէտք է փրկւնել հայ-թրջական թշնամանքին պատճառները, տգիտաբար կասկածներ կը սպրդեցնեն հայութեան (եւ մեր հարցերուն հետեւողներու) մտածողութեան մէջ, թէ արդեօք մենք՝ հայերս, յանցանքի բաժին չե՞նք ունեցած այդ թշնամանքին յառաջացման ու խորացման մէջ: Նոյն մարդիկը, նոյն (ան)տրամաբանութեամբ, ճակատաբաց կը խօսին Արցախի ազերիներու իրաւունքներուն պաշտպանութեան մասին, երբ անդին, Ատրպէյճան առիթ չի կորսնցնել յայտարարելու, թէ Արցախի հարցը լուծած է վերջնականապէս, չի ծածկեր այդ շրջանէն հայութիւնը վերջնականապէս հեռացնելու, այլապէս՝ նոր շարդի ենթարկելու իր դիտաւորութիւնները, ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ, այնպէս՝ ինչպէս իր դաշնակից Թուրքիան ըրաւ աւելի քան 100 տարի առաջ, իսկ այսօր ալ բառացիօրէն կը ձայնակցի Պաքուի խօսքին ու գործին: Երեւանի դեկը խլած այս «իմաստուն քաղաքագետներն ու դիւանագետները» վճռած են ճամբայ բանալ ցեղասպան թուրքին ու ազերիին հետ խաղաղութեան ու գործակցութեան «դարաշրջանին» առջեւ, պատրաստ են ընդունելու անոնց յայտարարուած ու չյայտարարուած բոլոր նախապայմանները (կը հաստատուին, թէ նախապայմաններ չկան), սկսելով Արցախի վերջնական խլումէն, Միւնիքի նկատմամբ պարտականութիւններուն ընթացք տալէ, Յայաստանէն իբրեւ թէ ազերիապատկան հողերու յանձնումէն, մինչեւ Յեղասպանութեան ճանաչման (եւ յարակից արարքներէն բխած) պահանջներու հրաժարումէն: Ըիշդ է. բացայայտ յայտարարութիւն չի հնչել Երեւանէն, սակայն Թուրքիոյ եւ Ատրպէյճանի ստացած «դրական նշանները» այրած են մեր «իմաստուններ»ուն թզենի վերջին տերեւը: Իսկ կարելի՞ է մոռնալ ու կոյր ձեւանալ, երբ այս իշխանութեան համակիր թէ հակադրուած հայութիւնը փաստացի փորձառութիւններ ապրեցաւ 10 Նոյեմբեր 2020-էն ասդին, տեսաւ ու իմացաւ, որ իշխանաւորները պատրաստ են, բերանացի եւ գրաւոր, աներեւակայելի գիշումներու երթալու: Սա արդէն անոնց ամբագրած ոճն ու խաբէպատիր գործելաձեւն է, թշնամիին պահանջներուն առջեւ կը սլանան... Նահանքի ճամբուն վրայ, մինչեւ իսկ պատրաստ են հակադրուելու Արցախի իշխանութեան կարգ մը կեցուածքներուն, այն Արցախին՝ որ եղաւ մեր վերանկախացման երթին մեկնարկը տուողը, այն Արցախին, որ մինչեւ երէկ, այսինքն՝ 44-օրեայ պատերազմէն ետք ալ, կը մնար հլու կամակատարը կորուստէ կորուստ գացող եւ պարտութիւնը արժանիք սեպող... քալողներուն:

Սիւսմանթօսն, իր «Այի Մը Մոխիր» բանաստեղծութեան մէջ, ունի ահաւոր վիշտ արտայայտող տողեր՝ ի լուր հայրենի տան կործանման, մոխրացումին. «Արցունքով, արցունքով լսեցի...»: Մեր այս տողերը կ'արձանագրենք նման գագացումով, ի տես Արցախէն ու Յայաստանէն կորուստներուն, Երեւանի իշխանութիւններուն դերակատարութեան, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ կացինահարումն ու մոխրացումը (գէթ այդ ճիգին լծուած են) մեր Դատին, ի խնդիր մեր անվիճելի ու անսակարկելի իրաւունքներուն տարուած դարաւոր պայքարին, բիւրաւոր նահատակներու գոհաբերումին, պտիկպտիկ ձեռք բերուած յառաջընթացին:

Արդեօք կ'անդրադառնա՞ն (իսկ մենք՝ ժողովուրդս, կ'անդրադառնա՞նք, պարտաւոր ենք անդրադառնալու), որ ներկայ ընթացքով, Թալէթներն ու

Յուշագրություն

ՇԱՏԱՍԷ



Գրիգոր Տունկեան

1977-ի Ապրիլի սկիզբն էր: Որպես Հայկաի Զրիստափոր Պատանեկան Միութեան վարչութիւն՝ մեր շաբաթօրեայ հերթական ժողովն էր: Օրակարգին վրայ ունեինք պարտականութիւնը՝ իւրայատուկ կերպով կատարելու միութեանս Ապրիլեան ոգեկոչումը:

Կարդացուելէ ետք միութեան 10 խումբերու ատենագրութիւններով ներկայացուած առաջարկները, վարչութեան եօթ անդամները յայտնեցին իրենց նախնական կարծիքները: Առաւելաբար ընդունելութիւն գտած էր կրտսերագոյն խումբերէն մէկուն կողմէ ներկայացուած Շատտատէի եղեռնավայրը ընդհանուր արշաւ մը կազմակերպելու առաջարկը: Իսկոյն միութեանս փոխվարիչ Անդրանիկ Մինասեան վերապատում մը կատարեց Շատտատէի մասին, կը մնար մանրամասնօրէն ուսումնասիրել շուրջ 100 հոգիով երթալու յարմարութիւններն ու անհրաժեշտ կարգադրութիւնները, ապա վարիչին ճամբով ստանալ պատասխանատու մարմնի վաւերացումը: Առ այդ որոշուեցաւ եզրակացութիւնը կատարել յաջորդ նիստին:

Մինչ այդ, պետք էր կապուելիք նաեւ մեր միութեանկան բոլոր փոխադրութիւնները կատարող Ապու Ազիզին՝ Արտոյին հետ: Ան իր ասպարեզին բերումով անպատճառ կրնար մեզի ճամբու մասին մանրամասնութիւններ տալ եւ ծախսը յստակացնել:



Մինչեւ մեր յաջորդ նիստը երկարող այդ շաբաթը, շատ երկար թուեցաւ մեզի: Հասաւ Շաբաթ օրը, երբ հերթական նիստին, վարիչ ընկ. Արթուր Պարտումեանը անտեց մեզի պատասխանատու մարմնին համաձայնութիւնը: Չափ չուներ մեր գոհունակութիւնը, իսկ երթելէի հարցով Արտոն պատրաստակամութիւնը յայտնած էր փոխադրամիջոցները ասպահովելու՝ ճշդելով շատ յարմար գին մը, ի քաջալերանք այս յանդուգն նախաձեռնութեան:

Վարչութիւնս այս տեղեկանքն ալ իմանալով ձեռնարկին մասին, որոշեց կատարել այս ուխտագնացութիւն-արշաւը եւ անցաւ միութեան ընկերները տեղեկ պահող մանրամասն գեկոյցի պատրաստութեան:

Քանի մը օր ետք, արշաւի մասին լուրը ՀՄԸՄ-ի սկաուտներն ալ խանդավառած էր, որոնք եւս սկսած էին պատրաստուիլ նման արշաւի մը:

Ապրիլի 24-ի առաւօտեան ժամ 5:00-ին, պատանիներու եւ սկաուտներու փոխադրակառքերը միասին ուղղուեցան Շատտատ: Անոնք սուրբալով անցան Եփրատի կամուրջէն, արդէօք հոնկէ՞ր, ուրկէ կոյս աղջիկներ իրարու ձեռք բռնեցին եւ իրենք գիրեք Եփրատ գետը նետեցին: Բնականաբար ո՛չ, բայց մեր պատանեկան երեւակայութիւնը արդէն կը գործէր, երբ ահա, կառքերը սկսան դանդաղիլ եւ մայրուղիի աջ եզրէն թեքուելով սկսան անպատի չոր հողին վրայ ընթանալ, մինչեւ որոշ տեղ մը, ուր կանգ առին եւ լսուեցաւ Ապու Ազիզին ձայնը. «հոսկէ անդին քալելով պիտի երթանք»:

Աշակերտական կարգապահութեամբ, գոյգ-գոյգ, մէկ գիծի վրայ յառաջացանք՝ հետեւելով Արտոյին եւ իր օգնականին, որոնք այդ ամայի վայրին միակ ծանօթներն էին: Գողտրիկ հայեացք մը չորս դիմբաւար էր փոխարինելու անպատք քալելով անցնելու մասին հատորներու ընթերցումը:

Շուրջ քառորդ ժամ քալելէ ետք, երբ ետ կը նայեինք, մեզ փոխադրող կառքերը շատ փոքր կ'երեւային անապատի ընդարձակութեան մէջ: Զիչ մըն ալ քալեցինք, մինչեւ որ մեզի առաջնորդող Արտոն նշան ըրաւ, որ արդէն հասած ենք մեր փնտռած վայրը: Երբ մօտեցանք, մեր առջեւ բացուեցաւ ահաւոր պատկեր մը, գոր երբեք չէինք երեւակայէր: Մենք կը գտնուէինք այդ տարածքի թերեւս ամենամեծ բնական խոռոչներէն մէկուն եզրին:

Ճիշդ պատկերացնելու համար, նախ պետք է մեր ոտքով քալած տարածքը նմանցնեմ անապատ կոչուող հրէշի երեսի հարթ բաժինին եւ հիմա հասած էինք բերանին, որ բաց էր: Շուրջ 30 մետր տրամագիծով եւ 4 մետր խորութեամբ խոռոչ մը էր: Այս այն խոռոչներէն մին էր, ուր կուտակուած են հայ բռնի գաղթականները եւ հրկիզուած թուրքին կողմէ, այսպէս պատմած էին վերապրողները եւ անապատի բարի պետեւիները: Բոլորով ծնրադրեցինք խոռոչին առաջ, մինչ մեզի ընկերակցող Տեր Ներսէս քահանայն

ԱԶԳԱՅԻՆ ...

Սկիզբ՝ էջ 4

Ստալինները կը ցնծան իրենց գերեզմաններուն մէջ, տեսնելով, որ իրենց ժառանգորդները, մասնաւորաբար Էրտողանն ու Ալիեւը սերտ գործակիցներ գտած են Հայաստանի իշխանական դասուն մէջ:

Եթէ թուրքին ու ազերիին հետ բարեկամութիւնն ու գործակցութիւնը պիտի թաղեն մեր պահանջներն ու արդար իրաւունքները, Արցախն ու Հայաստանէն հողամասեր (եթէ ո՛չ՝ ամբողջ հայրենիքը) նուէր պիտի տրուին թշնամիին եւ պիտի անցնին Նախիջեւանի, Կարս-Արտաշանի, Արարատի ու ամբողջ Արեւմտեան Հայաստանի ցանկին, ալ ինչո՞ւ անծծքով կը յիշենք Թալէթներն ու Ստալինները, որոնք, ի վերջոյ, հայ չէին, հայութեան ներկայացուցիչները չէին, մեր ձայնն ու կամքը չէին արտայայտեր, այլ կը գործէին համաձայն իրենց պետական շահերուն, որոնք ներհակ էին մեր պահանջներուն ու իրաւունքներուն:

Եւ... ի՞նչ հեգնանք. կործանարար, հայրենակորուստ խաղաղող իշխանաւորները մերթ ընդ մերթ կը ժպտին ընդդիմադիրները մեղադրելու, թէ Արցախը կը վտանգեն իրենց կարգ մը քայլերով ու պահանջներով: Կը մերժեն թուրք-ազերիական սադրանքներն ու վնասարար դաշինքները դատապարտող բանաձեւերը (եւ շատ ու շատ այլ բաներ, հասնելով մինչեւ ընկերային բարեշրջում հետապնդող առաջարկներ): Չարմանալի չէ, որովհետեւ իրենց շարքերուն այլախոսակ աղանդաւորներ հաշուող իշխանականները յայտնապէս ծանօթ չեն դարաւոր իմաստութեան, թէ դիմացինին աչքի շիւղը տեսնելէ առաջ, պետք է տեսնել սեփական աչքին գերանը...

Չարթունմի գանգը շատո՞նց հնչած է: Հնչած է 44-օրեայ պատերազմէն առաջ, անընդհատ կը հնչէ անելի քան մէկ ու կէս տարիէ ի վեր: Հայը չի կրնար ընդունիլ, թոյլատրել, որ մեր հողերը նոր կորուստներու մատուովն հայու ձեռքով, Ստալինի իրողական կտակարարի դերը յանձն առած հայանուններու՝ գրաւոր ու բանաւոր գիշումներուն ճամբով: Կը կանգնիք անյետաձգելի հրամայականի մը, մարտահրաւերի՝ դէմ յանդիման: Պէ՛տք է տեսնենք (եթէ արդէն չենք տեսած), որ «հինի-նոր»ի (եւ այլօրինակ) խաղերը մեզ ո՛ւր հասցուցած են, դէպի նոր կործանումներու կը տանին մեր հայրենիքն ու ժողովուրդը: Վաղը արդէօք երանելի՞ պիտի նկատենք 9 Նոյեմբերի համաձայնագիրը եւ ողբա՞նք, որ գոնէ անկից գործադրուած ըլլար, «Աստուած հոգի՛դ լուսաւորէ, հայր Ստալին» պիտի ըսենք...

24 Ապրիլէն առաջ, այդ օրն ու անկէ ետք, հայը իրաւունք չունի մոռնալու անցեալի ու երէկի նահատակները, անոնց զոհաբերումին պատճառներն ու նպատակը, հարց տալու՝ թէ արդէօք ուրկէ՞ ծնած է Թուրքիոյ պետութեան հետ մեր թշնամութիւնը: Հայուն քաղաքական ու ռազմական բազուկները չեն կրնար զգայազերծման մատնուած մնալ երկար: Մենք միակ «փոքր ժողովուրդը» չենք աշխարհի վրայ, որ արդարութեան զոհ գացած է, կը մնայ անարդարութեան զոհ: Չարենցեան պատգամը՝ սեփական ու միասնական ուժին ապաւինելու պատգամը այսօր նո՛յնքան անժամանցելի է, որքան մեր նորագոյն պատմութեան ամենէն մութ ու անելանելի թուացող փուլերուն:

Ճիշդ է. այսօր մեր շուրջը ու աշխարհի տարածքին տեղի կ'ունենան ծանրակշիռ իրադարձութիւններ: Բ. Աշխարհամարտէն ետք, երկրորդ անգամ ըլլալով, աշխարհն ու ուժերու դասաւորումը արմատական կերպարանափոխումի կ'ենթարկուին (թէեւ վարագոյրին ետին շահաւորները կը մնան նոյնը): Մենք ալ, ընդունիլիք կամ ոչ, ինկած ենք ահաւոր յորձանուտին մէջ: Հոն ալ եզակի չենք: Մեծ մարտահրաւերը այն է, որ իշխանութեան ձախաւեր ու կործանարար ընթացք տեսնողները՝ ընդդիմադիր թէ չէ գոյութիւն խաղացող կրաւորականներ, դիտողներ, ինչպէ՞ս պիտի միացնեն իրենց ձեռքերը, շրջելու համար պատմութեան անիւր: Այս խրամատին մէջ միաւորուելու կոչուած են ո՛չ միայն խորհրդարանական եւ արտախորհրդարանական ընդդիմադիրները, այլեւ նոյնիսկ մեր ամբողջ ժողովուրդը՝ Հայաստան-Արցախի մէջ թէ Սփիւնքի տարածքին, այսինքն՝ բոլոր անոնք, որոնք կը դաւանին ըլլալ Սարդարապատը կերտողներուն ժառանգորդները, նգովանքով կը յիշեն Թալէթներն ու մեր հողերը թշնամիին յանձնող՝ հողատու Ստալինն ու գործակիցները՝ հայաստան համայնավար կամակատարները:

Անկումի ընթացքը շրջումի եւ մեզ վերականգնումի տանող՝ միացեալ պայքարի շոգեկամքին մէջ պետք է տեղ գրաւեն նա՛եւ այն «պայմանագրեալ քալողներ»ը, որոնք արդէն սկսած են իրազեկդառնալ հայրենիքի կորուստեան վտանգին, պիտի չուզեն մասնակից ըլլալ աններելի մեղանշումին: Սա ցնորք չէ, այլ իրականանալի ընտրանք, որովհետեւ հայութիւնը նաեւ ակաւատեւ եղաւ, թէ կարգ մը հաւատացեալ «քալողներ» մօտիկ անցեալին ինչպէ՞ս բացին իրենց աչքերը եւ «ուսապարկ»ի դերէն հրաժարելով՝ այսօր իրագրելուն կը կանգնին իշխանութիւնը դատապարտողներուն շարքին:

Ազգովին մատնուած ենք ծանր տագնապի: Մեր պատմութիւնը վկայ է, որ նման պայմաններու մէջ, յարուստիւն առած է մեր ներքին փիւնիկը, անկարելի թուացող ալիքներու դէմ պայքարած ենք բարձրաճակատ, տուած ենք զոհեր, ունեցած ենք կորուստներ, սակայն վախճանական ելքը եղած է շրջադարձ՝ դէպի վերելք ու ինքնափրկութիւն: Այսօր, ինչպէս միշտ, ծանր մարտահրաւերը կը պահանջէ, որ ըմբռնենք բազմաճիւղ խաղը ճիշդ խաղալու ձեւերը, չբաւականանանք միայն ճիշդ դատողութիւններ ու մեկնաբանութիւններ ընելով, այլ մշակենք ու գործադրութեան դնենք հայրենիքի փրկութեան լիարժէք ծրագիր:

ՀՈԳԻՈՎ ԶԻՆԱԹՎՓ ՉԲԼԱԿԻ

(Խոհեր՝ Ապրիլ 24-ի Առիթով)



Միհրան Զիրատյան

Սրբագործուած մեր նահատակներուն կողմէ իբրեւ ժառանգ մեզի փոխանցուած բազմիմաստ կտակին մէջ, վստահաբար կայ նաեւ պատգամ մը յետնորդ սերունդներուն, որ կարելի է խտացնել այսպէս.

«Մենք Յեղասպանութեան զոհ դարձանք հայ ըլլալուս եւ հայօրէ՛ն դիմաւորեցինք մահը, իսկ դուք հայու պէս դիմաւորեցէ՛ք կեանքը եւ ապրեցէ՛ք հայօրէ՛ն՝ անկողորմ հայկականութեամբ եւ աներեր հաւատքով»:

Եւ որքան որ տարիները անցնին, այնքան աւելի շեշտ ու հրամայական պիտի հնչէ պատգամին արձագանգը՝ յատկապէս Սփիւռքի նորա-



հաս սերունդներուն, որոնք համար էր արդէն, որ Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը հայրապետական խորաքննին, այլեւ ահագանգիչ վերլուծումով մը տարին հռչակեց «Սփիւռքի տարի»...:

Անշուշտ, կտակուած պատգամին թելադրականութիւնը Ապրիլ 24-ի ոգեկոչական օրերուն համար չէ միայն, ոչ ալ հայրապետական ահագանգը տարուան մը համար է: Անոնք կը տարածուին տարուան բոլոր օրերուն ու գալիք բոլոր տարիներուն վրայ՝ ընտանիքի մէջ, ազգային ու կազմակերպական բոլոր միաւորներու օրակարգին վրայ եւ առաջնահերթութեան մէջ իբրեւ մշտատեւ օրահրաման՝ «հայօրէն ապրելու» պատգամին իւրացումը պիտի դառնայ առաջնակարգ թիրախն ու միջոց նպատակ ձեռնարկուելիք բոլոր տեսակի միջոցառումներուն մէջ: Այլապէս, ի գուր պիտի ըլլան բազում ջանք մեր...:

Իսկ ինչ կը վերաբերի Ապրիլ 24-ի ոգեկոչումներուն, անոնք առիթ են, որ մեր մտքին ու հոգիին մէջ վերաթարմացնենք Յեղասպանութեան յուշն ու յոյզը, վերապրինք ու վերահաստատենք մեր վերականգնումին հպարտութիւնը, ինչպէս եւ նորովի կրկնենք հատուցման, արդարութեան եւ իրաւունքի պահանջքով ազգովին պայքարելու մեր ուխտը այն ոգիով, ինչպէս որ բանաձեւուեցաւ ան Յեղասպանութեան 100-ամեակի համահայկական հռչակագրով. «ԿԸ ՅԻՇԵՄ ՈՒ ԿԸ ՊԱՅՄԱՆՉԵՄ»...:

Հայութիւնն ու Հայաստանը նոր ցեղասպանութեան մը սարսափին մատնելու համար եւ դիրին յաղթանակի մը յոյսով՝ Հայոց Յեղասպանութիւնը գործադրող բորենիներու հաւատարիմ ժառանգորդները 2020-ին, զինական ահաւոր հնարաւորութիւններով պատերազմ շղթայազերծեցին Արցախի ճակատին վրայ՝ արհամարհելով եւ առ ոչինչ համարելով մեծ պետութեանց նախաձեռնած իբրեւ թէ «զէնքի ուժը բացառելու եւ միայն երկխօսութեամբ Արցախի հարցը կարգաւորելու» միջնորդութիւնը:

Այդ պատերազմին միևնակ մնացին, ինչպէս որ միևնակ եղած ենք մեր պատմութեան բոլոր փուլերուն: Բայց աշխարհի վկայեց եւ մեր թշնամին տեսաւ, թէ հայ երիտասարդներու սերունդ մը ամբողջ յանուն կեանքի եւ հողի հազարաւորներու արիւն հեղեց կռուի ճակատներուն վրայ այնպէս, ինչպէս նախորդին էր՝ 30 տարի առաջ...: Եւ հիմա, նոյն թշնամին մահ ու աւեր սփռելէ ետք, «յաղթականի» դիրքը կը փորձէ մեկանգամընդմիջտ կոտորել մեր դիմադրական ոգին՝ «բարեացակամութեամբ» յօժարելով, որ իբրեւ թէ «դրացիական» յարաբերութիւններու սկիզբ մը կ'ուզէ դնել Հայաստանին հետ...:

Չմոռնանք, որ միջազգային բեմի վրայ կարելորդ դերակատար է Թուրքիան եւ քաղաքական նենգ խաղերու հմուտ մը: Որով տեղին է կասկածիլ, թէ ինչու մեծապետական հովանաւորութիւն կը վայելէ Թուրքիոյ սարքած այսօրուան «խաղաղութեան» դաւադիր խաղը Հայաստանի վրայ, որ դժբախտաբար տակաւին սթափած չըլլալով ճազմական հարուածին ուժգնութեանը՝ կը գալարուի ներքին-քաղաքական հակամարտութեան ոլորտապտոյտի մը մէջ:

«Դրացիական» յարաբերութիւններ, «խաղաղութեան» նոր շրջան, ապահովութեան երաշխիքներ: Աղուր լոգուզներ են ասոնք, փորձիչ հեռանկարներ, որոնք կրնան սայթաքեցնել մեզ եւ վերջնականապէս ջլատել բարոյական մեր կորովն ու դիմադրական ոգին: Մտահան չընենք, որ միևնակ եղած ենք անցեալին, միևնակ ենք հիմա եւ հակառակ տրուած խոստումներուն միևնակ պիտի մնանք նաեւ ապագային: Չտարուինք շռայլ ժպիտներէ ու սին խոստումներէ եւ սուղ գին չվճարենք անոնց համար:

Ռազմադաշտի պարտութենէն ետք կարելի է վերականգնիլ, բայց կարելի չէ՝ եթէ հոգիով զինաթափ ենք եւ անձնատուր՝ ազգի ոչնչացումը

ցանկացող թշնամիին: Շռայլ խոստումներն ու ապահովութեան երաշխիքները բարիով ընդունելի են, բայց Ո՛Չ Արցախի դիմաց, Ո՛չ անկախութեան կորուստի գնով:

Կը թուի, թէ քաղաքական սեղաններու շուրջ արդէն իսկ սկսած է դիւանագիտական ճակատամարտը: Վա՛յ մեզի, եթէ հոն պարտեալի հոգեբանութեամբ մղենք մեր կռիւը: Պիտի մնանք անզիջող մեր իրաւունքներուն մէջ: Գիտնանք այն պարզ ճշմարտութիւնը, թէ Կովկասի հարաւային տարածաշրջանին մէջ խաղաղութեան հաստատումը որքան որ մեզի, նոյնքան եւ իրենց՝ շահագրգիռ ուժերուն համար կենսական է...: Անոնք նաեւ աչալուրջ կը իսկնեն, որ հակամարտող երկիրներ գիրար հակակշռելու բաւականաչափ զինուժ ունենան:

Նոյնպէս գիտնանք, որ դիւանագիտական ճակատամարտի մէջ յոգ-նողները ընդմիջտ կը կորսնցնեն ամբողջ պատերազմը: Մեր պարտութիւնը պատճառ չէ, ու չի կրնար ըլլալ, որ Հայաստանը չըլլայ անզիջող ու կարծր բանակցող: Այնպէս, ինչպէս չեղաւ Ազերին իր պարտութեան մէջ...:

Հպանցիկ այս խոհերուն առիթը Ապրիլ 24-ի չարաշուք տարեդարձը եղաւ: Որով մտաբերենք, թէ ինչպէս Յեղասպանութենէն վերապրող հայու բեկորները անկարագրելի դժբախտութեանց մէջ իսկ զինաթափ չեղան հոգիով, անօրինակ ոգեկանութեամբ յարթեցին իրենց վիճակուած դժխեմ ճակատագրին, ոտքի կանգնեցան եւ կարճ ժամանակի մէջ հայրենակարօտ ու կազմակերպ հայօճախներ հիմնեցին: Նոյնը պատահեցաւ Հայաստանի մէջ, ուր աւելի ահաւոր պայմաններու տակ, շնորհիւ հիանալի ու ոգեշնչող ղեկավարներու՝ յուսահատ ու վախցած ամբոխէն արի արանց բանակ կազմուեցաւ եւ հայրենիք կերտուեցաւ...:

Մինչ հիմա, հակառակ Արցախեան վերջին պարտութեան եւ ներկայի անորոշութեան, գիտակցինք, որ գէթ վերջին հազարամեայ մեր պատմութեան մէջ, հայութիւնը ամեն տեսակետով չէ ունեցած այն ներուժն ու կարողականութիւնը, որ ունեցաւ անցնող 30 տարիներուն եւ ունի նաեւ այսօր:

Կը մնայ, որ վճռապէս մերժենք հոգեկանով զինաթափ ըլլալ: Լիարժէք օգտագործենք մեր կարողականութիւնը եւ ազգովին հաւատարիմ մնանք Հայաստանի Հանրապետութեան բանաձեւած ու որդեգրած անկախութեան հռչակագրին, Յեղասպանութեան 100-ամեակի համահայկական հռչակագրին եւ զանոնք ուղենիշ դարձնենք՝ յառաջիկայ մեր քայլերուն համար: Այլապէս, ազգին նաւը յանձնած կ'ըլլանք արեւելի քմայքին:

Սթէք, 16 Ապրիլ 2022

ՇՍՏՍԵ...

Սկիզբ՝ էջ 5

առօթք բարձրացուց առ Աստուած նահատակներու յիշատակին:

Տասնեակ մը ընկերներով, հետաքրքրութենէ մղուած ուզեցինք անպատճառ մտնել այդ խոռոչը, զիրար բռնելով, հազիւ յարմար էջքի վայր մը գտած վար սղոսկեցանք...: Մտանք մարդակուլ հրեշի բերանը, արդէն անապատի ընթերցին մէջն էինք: Տարածքի կողմերէն մեկը աւելի նեղ եւ երկար անցք մը կ'երեւար: Յառաջացանք հոն, այնքան որքան կարելի էր, նախ հասակով, ապա կոկոզ, մինչեւ որ անցքը աւելի նեղացաւ եւ շնչառութիւնը դժուարացաւ: Գետինն ալ հաւանաբար կրային աւելի լարծուն դարձաւ: Վերադառնալ թէ յառաջանալ, տատամանքի ընթացքին չէինք անդրադարձած այդ մութ անցքին խորքէն լսուող թփուտոցներուն: Մեր հոն անակնկալ կերպով յայտնուիլը, խանգարած էր անդորրը, անապատի տօթէն փախած եւ հոն բոյն դրած հարիւրաւոր կաքաներուն, որոնք անկոչ հիւրերէն նեղացած յանկարծ թափահարելով իրենց թելերը դէպի ելք ուղղուեցան՝ երբեմն մեր երեսներուն գարնուելով:

Անապատի հրեշի բերնին խոռոչը մտնելու մեր արկածախնդրութիւնը հոս վերջ գտաւ, մենք ալ դուրս եկանք: Այդ պահուն, տարօրինակ զգացում մը պատճառ էր մեզ, խոռոչէն այս ձեւով դուրս գալով, թերեւս այլալայծ էինք եւ առաւել ազդուած: Մեզի թուեցաւ, որ մեր նահատակներու հոգիներն էին անոնք, որոնք գարթեցուցինք մեր երեսումով:

Մեր այցելութիւնը կը մօտենար իր աւարտին, պէտք էր վերադառնալ յարմար ժամով հասնելու: Հալեալ: Մեր շարքերը վերակազմուեցան եւ ուղղուեցանք փոխադրակառք: Ի՛նչ լաւ էր անապատի կիզիչ արեւուն տակ, այրող աւազներուն վրայ քալելը, մանաւանդ երբ գիտես, թէ ապահով ես եւ քեզի հանգիստ փոխադրակառքեր կը սպասեն:

Այս արշաւին դասախօսութիւն չկար... բայց մենք տեսանք Եփրատը, քալեցինք անապատի մէջ, մտանք հրեշի բերանը եւ կաքաներու ճամբով առնչուեցանք մեր նահատակներու հոգիներուն հետ, ապրեցանք խառվայտ պահեր, մեզի հետ վերցուցինք անմոռաց յուշեր եւ աւելի ամրացած մեր արդար պահանջատիրութեան մէջ, երկար տարիներու համար ոգեշնչման աղբիւր ունեցանք:

Փոխադրակառքերը շարժեցան դէպի մայրուղի: Հոս աւելի ամփոփ եւ խաղաղ, կրկին ինչեք մեքենավար Արտոյին առաջնորդութեամբ «Հայր Մեր»ը: Ինքնաշարժները կը սուրային անապատին մէջ: Վերադարձի ճամբուն, մեր աչքերը կրկին Եփրատը կը փնտռէին եւ իւրաքանչիւրս իր մօտ նստող ընկերոջ հետ ի՛նչ յոյզեր կը բաժնեկցէր:

Հասանք ՀՄԸՄ-ի պարտեզին առջեւ, ուր խուռներամ ծնողները մեզի կը սպասէին:

- Ուրկէ՞ կու գաք, - հարցուց օտար անցորդ մը:
- Շատատէսէն, - ըսինք:
- Ինչու հոն հա՛յ կայ, - հարցուց գարմացած դէմքով:
- Հայերը հոն են, մենք անոնց այցելութեան գացած էինք, - պատասխանեց ընկերներէս մեկը:

ԿԱԶՄ ՈՒ ՊԱՏՐԱՍ ԸԼԿԸ ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ ՊԱՀԱՆՋ Է



Մարիա Գարիբյան

Տարիները սրընթաց իրարու կը յաջորդեն եւ ընթացքին փոփոխութիւններ տեղի չեն ունենար: Զայ Դատի աշխատանքները կը շարունակուին, սակայն դատական թղթածրարը իր տեղը կը մնայ նոյն գրասեղանին վրայ: Անոր բովանդակութիւնը կ'ուժեղանայ շնորհիւ աշխարհասփիւռ Զայ Դատի գրասենեակներու ու յանձնախումբերու իրականացուցած ծրագիրներուն, սակայն անկա տակաւին նոյն տեղն է, նոյն գրասեղանին վրայ: Անոր ծաւալը կ'ընդլայնուի, սակայն անկա կը մնայ նոյն տեղը, նոյն գրասեղանին

համար պատրաստողներու կարիք ունի: -Բնականաբար թղթածրարը միջազգային դատարան ներկայացնելու համար անոր իրաւացիութեան ու արդարութեան հաւատացողներու պէտք ունի: Իսկ մենք այս հինգ պայմաններէն ո՞րմէկը ունինք եւ ո՞րմէկը՝ ո՛չ: **ա.-Զաղաքական-յարաբերական աշխատանքները կը ծաւալի՞ն:** Անվարանօրէն, այո՛: ԶՅ Դաշնակցութեան Զայ Դատի Գրասենեակներն ու յանձնախումբերը շուրջ կէս դարէ ի վեր ամենայն



վրայ: Իսկ մինչեւ այն ատեն, որ իր տեղը չէ փոխած, մենք ալ կը մնանք մեր տեղերը եւ կը շարունակենք հեռուէն դիտել մեր տարածքները: Զեռուէն դիտել, այսինքն շարունակել վերապրիլ թախիծն ու մորմոքը, այրիլ կարօտէն, տառապիլ հայրենազրկումէ եւ շարունակել կոչուիլ սփիւռքահայ:

լրջութեամբ ու հետեւողականութեամբ այս աշխատանքը ի գործ կը դնեն: Անոնք տարբեր երկիրներու մէջ, ուժեղ ու ազդեցիկ երկիրներէն մին-

Սերի դաշնագիրին եւ Ուիլսոնեան իրաւարար վճիռին նման ուժեղ փաստաթուղթերը, աշխարհի շարք մը երկիրներու խորհրդարաններու, կառավարութիւններու կամ պատասխանատու անձնաւորութիւններու կողմէ Զայոց Ցեղասպանութեան ճանաչման փաստերը, տասնամեակներէ ի վեր օտար արդարապաշտներու կողմէ հրատարակուող վաւերագրական տուեալները, ապացուցագրերը, ակնատեսի վկայութիւնները, Գերմանիոյ եւ Վենետիկի արխիւները, Սփիւռքի մէջ մեր գոյութեան ապացոյցը, յատկապէս Միջին Արեւելքի երկիրներուն մէջ, հոն պահուած, պաշտօնապէս հաստատուած գրութիւնները, վաւերագրական տեսագրութիւնները ե՞րբ պիտի մէկտեղուին եւ պատրաստ դառնան միջազգային դատարան ներկայացուելու:

-Բնականաբար այս գործը միայն իրաւական երես չունի, այլ քաղաքական-յարաբերական նոյնքան կարեւոր աշխատանք ծաւալել կը պահանջէ, ենթահողի պատրաստութիւն կը պահանջէ:

-Բնականաբար թղթածրարը միջազգային դատարան ներկայացնելը իրաւական կողմ կը պահանջէ, միջազգայինօրէն ճանչցուած ու վաւերացուած կողմ:

-Բնականաբար թղթածրարը միջազգային դատարան ներկայացնելը նիւթական պահանջներ ունի:

-Բնականաբար թղթածրարը միջազգային դատարան ներկայացուելու պատրաստ ըլլալու

տի ունենայ եւ կացութիւնը պիտի բարեփոխուի: **գ.-Նիւթական պահանջ.** - Որեւէ դատական գործ նիւթական ծախսեր կը պահանջէ: Իսկ ո՞ր դատական կամ ոչ-դատական ծրագիրը կամ նախաձեռնութիւնը նիւթական չի պահանջեր: Զագար ու մէկ նախագիծի վրայ գումարներ կը ծախսենք, հազար ու մէկ տեղի, երբեմն անտեղի, ծախսեր կ'ընենք, իսկ մեր դատական թղթածրարին համար պահանջուած գումարը պիտի չկարենա՞նք տրամադրել: Աշխարհով մէկ ապրող արեւմտահայ եւ նիւթական կարողականութիւն կուտակած որեւէ ազգասերի եթէ դիմենք ու բացատրենք մեր նպատակի էութիւնը, առանց վայրկեան մը իսկ երկմտելու ան պիտի ցուցաբերէ իր զօրակցութիւնը:

դ.-Թղթածրարը պատրաստողներ. - Դատական թղթածրարներու պատրաստութիւնը մասնագետներու կարիքն ունի: Այս պահանջին ուղղութեամբ բնաւ մտահոգութիւն չունինք: Զայրենիքի թէ Սփիւռքի մէջ ունինք հոյլ մը փորձառու եւ հմուտ օրէնագետներ, իրաւագետներ եւ փաստաբաններ:

ե.-Թղթածրարի հաւատացողներ. - Ամենաինչտ կարծուած, սակայն ամենադժուար ապահովուելիք պայմաններէն մէկն է: Ինչո՞ւ, որովհետեւ այս պայմանի առկայութիւնը կարելի չէ շօշափել: Զիչ չէ թիւը անոնց, որոնք առերես կը յայտարարեն իրենց հաւատքն ու աջակցութիւնը Զայ Դատին, սակայն իրենց էութեան խորքերը թերահաւատ են: Այս տեսակը ամենավտանգաւորն է, որովհետեւ մեծապէս կրնայ վնասել թղթածրարի յաջողութեան: Այսուամենայնիւ հաւանաբար փորձառութիւնը մեծ դեր կ'ունենայ այստեղ եւ կարելի կ'ըլլայ երկու ուղղութեամբ աշխատիլ: Մէկ կողմէն ջանալ տարբեր միջոցներով հաւատք ներշնչել թերահաւատներուն մօտ, իսկ միւս կողմէն թղթածրարի հետապնդման գործը յանձնել անոր արդար ամբողջ գծով դրոյն կասկածն անգամ չունեցողներուն:

Տարիները որքան հեռանան, այնքան համբերութիւնը կը հատնի եւ կրնայ յուսալքութիւնը տարածուիլ: Ազգային կարեւոր բոլոր ծրագիրները հետապնդելը անհրաժեշտ են, ազգային անվտանգութենէն սկսեալ մինչեւ հայրենիքէն ներս թէ դուրս հայապահպանման եւ հայահզօրացման աշխատանքները, սակայն անոր կողքին,



չէ ամենահամեստ կարողութիւններով երկիրներու մէջ, յարաբերական գործ կը կատարեն, որոնց արդիւնքները մենք տեսած ենք եւ կը շարունակենք տեսնել:

բ.-Իրաւական կողմի պահանջ. - Միթէ մենք չունինք մեզ՝ հայութիւնս, Զայաստանը ներկայացնող իրաւական կողմ, չունինք միջազգայինօրէն ճանչցուած երկիր, ժողովուրդ ու իշխանութիւն: Ունինք: Թէկուզ այսօրուան իշխանութիւնը այն չէ, որ մեր ակնկալութիւնները կը գոհացնէ, սակայն այս իրավիճակը այսպէս պիտի չմնայ, ուշ կամ կանուխ իշխանափոխութիւնը տեղի պի-

նոյն կարեւորութեամբ, լրջութեամբ եւ բծախնդրութեամբ պարտաւոր ենք հետապնդել մեր Դատը: Ժամանակը ի նպաստ մեզի չէ: Դանդաղիլը յանցագործութիւն է: Զաղաքական իրավիճակները յարափոփոխ են, վերջին տարիներուն տեղի ունեցած եւ ունեցող իրադարձութիւնները հաստատեցին ու համոզեցին, որ մնայուն իրավիճակներ չկան եւ քաղաքական իրերու տեղադրութեան փոփոխութիւնները անսպասելիօրէն կրնան խոր իրավիճակներ յառաջացնել: Զտեսաբար կազմ ու պատրաստ ըլլալը անյետաձգելի ազգային պահանջ է:

ԴԱՋՈՒԱԾՔ



Նոր դարուն երիտասարդությունը կը զարդարե մորթը դաջուածքով.
մարմնին ամեն կողմը,
գոյնգոյն եւ իմաստալից:
Եւ ոմանք մեկ-երկու հատ չէ,
այլ պատմութիւն գրելու նման
դաջուածքով կը դորշմեն մարմինը:

Ե՞րբ զարդարանք եղաւ դաջելը.
գիտե՞ք:
Զսաներորդ դարուն սկի՞զբը արդեօք.
դաջեցին:
Կիները. կիները, որոնք փախցուցեր էին:
Կիները, որպէսզի չկորսուին,
պատերազմի որբերը
դաջեցին:
Եւ ո՞ր պատմութիւն գրեցին:
Դեմքին վրայ:
Անոնք չկրցան հեռանալ
ու դաջուած դեմքով,
գլուխ ծռեցին իրենց ճակատագրին:

Երբ սարսափած աչքերով կը նային
լուսանկարին մէջէն,
լեզուները անխօս են,
աչքերն են որ կը խօսին:

Դաջեցին:
Կիները, որոնք կնութիւն ըրին,
երեխաներու ծնունդ տուին
ուզելով-չուզելով:

Ո՞վ բիծ մը կ'ուզէ իր դեմքին վրայ.
չհարցուցին,
դաջեցին:
Արդեօք իրենց որդիները հարցուցի՞ն
թէ ի՞նչ կը նշանակէր այն նշանը
եւ ինչո՞ւ իրենց մօր դեմքին:
Ունէին պատմելիք անշուշտ,
սարսափած աչքերուն ետեւը պահեցին
իրականութիւնը:

Եւ այդ կիները դաջեցին,
ագգի մը պատմութիւնը
տխրած դեմքերու վրայ
քանդակեցին:

ԵՐԱԶ ԶՈՒՆԵՑՈՂ ԱՂՋԻԿՆԵՐ

Լեւոն Գարագիւթիւք

Բանախօսը կը նստի.
բոլորն ալ ուշադրութիւնը կը սրեն այն կողմ,
ու կը սկսի բանախօսութիւնը:
Բանահիւսութեան նման,
որպէս պատմութիւն,
առասպել անհաւատալի.
բայց իրական:

«Արաբ երկիրներէն մեկուն մէջ
նստեր էի սրճարանը, ուր
յոզնութիւնս կը փարատէի», կ'ըսէ ան:

«Երիտասարդ մը մօտեցաւ թխադէմ:

- Դա՞յ էք:

- Դայ եմ:

- Մեծ մայրիկս հայ էր:

Թուքս կուլ տուի ու հարցուցի.

- Ո՞վ է: Գիտե՞ս անցեալդ:

- Սահմետական արաբ եմ: Պետեւի թոռ եմ:

- Դայ մեծ մայրիկ եւ պետեւի՞: Պատմէ՛, որ լուծեմ մտքիս թնճուկը:

- Դինգ քոյր կը բերեն Յորդանան: Օրերով ճամբայ կը քայլէ կարաւանը: Ուղտերու վրայ կը ճամբորդեն
հինգ աղջիկ գեղեցիկ ու նազելաշուք: Անոնք կին պիտի ըլլան հինգ եղբօր՝ պետեւի»:

Զակառակ որ սրահը տաք է,
պաղ հով մը կը փչէ:
Եւ կամ ինծի այնպէս կը թուի:
Դիմա սիրտս կը խառնուի:
Ստամոքսս ցաւով կը գալարուի:
Եւ կը զգամ, թէ արիւնս կը քաշուի
երակներուս մէջէն:
Գիտեմ, որ պատմութիւնը շատ պիտի յուզէ զիս,
որովհետեւ ես անոր սահմաններէն
աւելի անդին պիտի անցնիմ:
Ատանայէն, Մարաշէն աղջիկներ բերին,
պետեւի հինգ եղբօր կին ըրին:



Աչքերս զոցեցի պահ մը,
սակայն ականջներս կը լսէին.
ու բանախօսը կը շարունակէր պատմել
հեզ ու հանդարտ ձայնով:
Այս դէպքերուն շատ հանդիպած ըլլալու էր:
Եւ լռեց շուրջս ամեն բան:

Արզանդը դեռ մանուկ,
ծիծերը լեցան կաթով,
անոնց գիրկը ինկան երեխաներ.
մանուկ հասակի մեծցան
պետեւիին ծոցին մէջ.
տասնեօթը կին առած պետեւիին
գոգին մէջ:

Օժիտ չունեցաւ երիտասարդին մեծ մայրիկը,
ոչ ալ վրան-գլուխը շնորհքով հագուստ մը:

Օժիտ չունեցան հինգ քոյրերը.
երազ չունեցան:

Ո՛հ, անոնք երբ մանուկ էին,
պետեւիին ծոցը մտան:
Դինգ պետեւի եղբօր
կին դարձան. առանց օժիտ ունենալու,
զաւակներու, թոռներու տեր եղան:
Եւ բնաւ երազ չունեցան:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ¹



**Ֆաուզ Մրզեյեք՝
Արաբերեն Թարգմանեց՝
Հուրի Ագեգեան**

Ամեն ինչ այնպես կը ներշնչէր, որ ուրախութիւնը արտասովոր պիտի ըլլար: Համադամներով լեցուն սեղաններ, մերձակայ գիւղերէն մեծ թիւով եկած մարդիկ, հարազատներու թէ բարեկամներու դէմքերուն վրայ գծագրուած խանդավառութիւն, երբ մէկը միւսէն անտեղեակ՝ գբաղած կ'երթեւեկէին:

Արդէն ուրիշ ալ չէր կրնար ըլլալ՝ սեւ ու խոշոր աչուկներով եւ ջրվեժի պես ուսերուն վրայ թափող հիւսքերով գիւղի գեղուհիին՝ Մարալին հարսանիքը: Աւելի քան ամիսէ մը ի վեր համագիւղացիներուն միջեւ կը խօսուէր այս մասին, երբ Մարալ, - վերջապէս, - սիրտը տուած էր երիտասարդ, վայելուչ եւ հանդարտաբարոյ Արմենին:

Աստեղագարդ գիշերները, կախարդական իր ձայնով սիրահարին համար Արմենին երգած երգերը՝ անփոյթ զեփիւռը հեռուները կը տանէր դաշտերուն ու արտերուն մէջէն, այդ երգերը պարմանուհիներուն սրտերը կ'այրէին, իսկ կնճիռներու տակ կքած ծերունիներուն աչքերը կը ժպտէին հեգօրէն, պայծառ...:

Արմենին եւ սիրուն Մարալին սիրոյ հովուերգութիւնը գիւղի գրոյցներուն նիւթն էր: Այդտեղ, կեանքը ընդհանրապէս կեդրոնացած էր յաջող կամ ձախող սիրոյ պատմութիւններու շուրջ, երբեմն կ'ընդմիջուէին նոր ծնունդի մը կամ մահուան մը, ճամբորդի մը վերադարձին եւ կամ ալ գիւղի գաւազներուն գաղթին լուրերով:

Այս անգամ սակայն, ամէն ինչ իւրայատուկ համ մը ունէր: Երկու երիտասարդներն ալ գիւղի սիրելիներն էին, Մարալը ընտրելով Արմենը՝ պարկեշտութիւնն ու առաքինութիւնը ավելի գերադասած էր, քան հարստութիւնն ու փառքը: Կարծեք թէ ուրախալի վերջ մըն էր ա՛յն պատմութիւններէն մեկուն, զոր տատկները իրենց թռչուններուն կը պատմէին, երբ միջտ բարին կը յաղթէր եւ բոլորը միասին կ'ապրէին երջանիկ, համերաշխ:

Պսակի արարողութենէ վերջ, հարսնեւորները նստած էին եկեղեցւոյ շրջափակին մէջ շարուած սեղաններուն շուրջ: Ներկաները կը խնդային եւ կը պոռչտային, տիրող ժխորը սկսած էր բարձրանալ գիւղի նշանաւոր, ընտիր գիւղիին ազդեցութեամբ: Ծուռով, տարեցներն ալ սկսած էին իրենց խռպոտ ձայներով երգել, - արդիւնքն էր Ատանայի շրջակայքէն փախստական ձեռք բերուած ծխախոտին, - եւ իրենց յուշերը պատմել, զորս ծանօթ կրկնութիւններ էին...: Մինչ երիտասարդներն ու երիտասարդուհիները գբաղած էին ճշդելով իրենց յաջորդ ժամադրութիւնները այգիներուն մէջ եւ կամ Սուրբ Անաստասի ժայռին ետեւ, որ մարդու կերպարանք մը ունէր: Ալեւորները կը հաստատէին, որ Սուրբը չէր ուզած հեռանալ գիւղէն եւ անշարժացած էր քարէ կերպարանքով, որպէսզի իր հօտին մօտ մնար...:

Գիւղի քահանան նստած էր մեծ սեղաններէն մեկուն մէջտեղը: Հարսին հայրը քահանային բան մը կ'ըսէր, մինչ ան կը խնդար եւ գոհունակութեամբ մերթ իր համագիւղացիներուն կը նայէր, մերթ ալ երջանիկ գոյգին: Սակայն, մէկ կամ երկու անձեր, որոնք լաւ կը ճանչնային քահանան, քողարկուած մտահոգութիւն մը կը տեսնէին անոր բարի աչքերուն մէջ անթողուած: Կը թուէր, թէ վախազոյ բան մը գիտէր, բայց չէր ուզէր բացալայտել:

Առաջին կրակոցները ոչ ոք լսած էր..., առաջին ինկողները ոչինչ հասկըցած էին եւ բաւականացած էին տարածուած թեւերով երկարիլ խոտին վրայ, զարհուրանքը սառած էր անոնց բաց աչքերուն մէջ: Յետոյ, այդ օտարականները սուրբերով եւ սուխներով յարձակած էին, ամենքը անշունչ կ'իյնային իրենց իսկ արեան ճապաղիքներուն մէջ: Մանուկներուն անմեղութիւնը սիրտերը չէր շարժած, ոչ ալ կիներուն տկարութիւնը..., մինչ Սուրբ Անաստասը բանտարկուած մնացած էր իր յաւիտենական ժայռին մէջ: Դարեր շարունակ Սուրբը կրցած էր գիւղը պաշտպանել վայրագ գազաններէն եւ բնութեան աղէտներէն, սակայն անկարող մնացած էր մարդուն չարիքին դէմ...:

Յարձակողները մօտեցած էին Արմենին եւ Մարալին, երկուքը միասին իրենց ամբողջ ուժով սկսած էին վագել, միւսները անօթի գայլերու պէս ոռնալով հասած էին անոնց: Վերջին վայրկեանին Արմեն տես դարձած էր եւ իր յուսահատութեան առթած ուժով հարսին սիրոյն դիմադրած էր, մերժած էր մեռնիլ, մինչեւ որ բաւարար ժամանակ շահած էր, որպէսզի Մարալը կարենայ փախչիլ...:

Ծանօթօրէն վիրաւորուած Մարալը երեք օր եւ երեք գիշեր շարունակած էր սողալ: Միջոցին ան գետնի բոյսերը կ'ուտէր, լճացած ջուրերէն կը խմէր եւ կը պահուրտէր անծայրածիր տափաստաններու տարածքին տարտըղնուած թաւուտներուն մէջ: Երրորդ օրուան գիշերը Մարալ հասած էր մեծ գետի ափին, բնագոյաբար վստահ էր, թէ գետին միւս կողմը ապահովութիւն պիտի գտնէր...: Մարալ այս գգացումին դրդապատճառը չէր հասկընար, կեանքին մէջ գետը չէր կտրած, պարզապէս գիտէր, որ անիկա պատուար մը պիտի դառնայ իրեն եւ իր աշխարհը կործանողներուն ու հարազատները սպանողներուն միջեւ:

Մարալ փորձեց գետը անցնիլ այն տեղէն՝ ուր կը խորիւր թէ ջուրին խորութիւնը շատ ցած էր: Չգաց սակայն, որ ցեխոտ գետինը ոտքին տակ կը սահէր, ջուրին հոսանքը հաւասարակշռութիւնը կը խախտէր եւ գիւղը

խորունկին մէջ կը նետէր: Ան ճիգ մը ըրաւ յաղթահարելու մոխրագոյն, գորշ ջուրերը, վիրաւոր մարմնին մնացեալ ուժը սպառած էր եւ աղօտ կեանքին պատրոյգը գրեթէ մարած էր...: Վերջին անգամ մը ան նայեցաւ արեգակի հրագոյն սկաւառակին, որ իր կարգին կը խեղդուէր հորիզոնին մէջ եւ բարձր ձայնով պոռաց.

-Մայր ի՛մ...:
Յետոյ... յետոյ խաւարը տիրեց...:

Երբ Մարալ աչքերը բացաւ, մթաստուերը տեսադաշտը կ'աղաւաղէր: Ան երկար ժամանակ չէր յիշեր թէ ո՛ր էր, կամ ի՛նչ պատահած էր իրեն: Տակաւ առ տակաւ վրան հակած մարդու մը դիմագիծերը սկսած էին յստականալ, ուշադիր գիւղը կը գնէր: Մարդասպանի մը սարսափը պատեց Մարալը, դանդաղ շարժումով մը հակադարձեց փորձելով ետ քաշուիլ, բայց այնքա՛ն տկար էր շարժում մը կատարելու համար: -Ինձի մի՛ վնասէ՛ր..., - ըսաւ ցած ձայնով մը:



Մարդուն դէմքին վրայ գարմանքի արտայայտութիւն մը ուրուագծուեցաւ: -Մի վախնա՛ր, - պատասխանեց, - քեզի վնաս պիտի չհասցնեմ..., - եւ ձայն տուաւ: - Եկո՛ւր, - աղջիկը սթափիլ սկսաւ...: Մարդուն ետին կնշը դեմքը երեւցաւ, գորովանքով կը նայէր Մարալին: -Փա՛ռք Աստուծոյ, - ըսաւ կինը, - քիչ մնաց որ մեռնէ՛ր...: Ամուսինն ալ կարեկցութեամբ կը նայէր:

-Անպայման շատ տառապած է, միայն չարիքի հանդիպած մէկը այսքան կը վախնայ...: Յետոյ ոտքի ելաւ եւ դուրս գնաց: Կինը դարձեալ խանդադատանքով շոյեց Մարալին ճակատը, գաւաթ մը տաք կաթ տուաւ ըսելով.

-Իմէ՛, եւ այլեւս հանգստացի՛ր...:

Մարալ դողոյք ձեռքով գաւաթը առաւ, չէր կրցած հաւատալ որ ողջ մնացած է, աղէտը դեռ քանի մը օր առաջ պատահած էր, սակայն ինք այնպէս կը կարծէր, թէ ամբողջ դար մը անցած էր իր հարազատներուն հետ միասին ըլլալու վերջին օրէն ի վեր:

Երկու օր առաջ, հօտաղ իպրահիմը մինչ կը պատրաստուէր գետածորին մէջ փռուած գիւղի իր տունը վերադառնալ, աղերսական եւ նուաղուն ձայն մը լսած էր: Այդ կողմ դառնալով՝ գետի ջուրերուն մէջ տարուբերող մարմին մը նկատած էր, անմիջապէս շտապելով փրկած էր խեղդուողը: Իպրահիմ ապշած էր տեսնելով, որ գեղեցիկ երիտասարդուհի մըն էր, շա՛տ վատ վիճակի մէջ...:

Եւ իպրահիմ երիտասարդուհին իր տունը տարած էր, ուր կինը երկուերեք օր խնամած էր Մարալը, աղջկան վերքերը ձեռքով օժած էր, երիցուկ ու վայրի անանուխ խաշած եւ տաք-տաք խմցուցած էր, պաղ ջուրի վիրակապեր գետեղած էր տեսնելու ջերմացած ճակտին վրայ, մինչեւ որ վիճակը բարելաւուած եւ կեանքի վերադարձած էր...:

Յաջորդ օրերուն, Մարալ քիչ-քիչ կազդուրուած էր, վերքերը սկսած էին բուժուիլ, այսուհանդերձ, դաժան յուշերը ավելի զօրանալով կը մխրճուէին մտքին մէջ, այդ վերջին օրուան պատկերը իրենց գիւղին մէջ, հարսանիքը, ամբողջ ուշքը գրաւած էին: Միաժամանակ, Մարալ կը յիշէր ահաբեկած ծնողները, սիրելի Արմենին սպանութիւնը, տունները՝ զորս կրակին մէջ կը բոցավառէին...:

Մարալ երկար ժամեր անշարժ կը նստէր գետեզրին, նայուածքը անփոփոխ յառած այն կետին, ուրկէ եկած էր...: Ան հացադուլ ըրած էր, նաեւ մերժած էր խօսիլ, սրտակից ամուլին միսիթարական փորձերը ապարդիւն մնացած էին, երբ այլեւս համոզուած էին, թէ Մարալ վիշտէն պիտի խելագարէր:

Շար.՝ 12 11 ➤

¹Այս պատմութեանը քաղուած է «ԱՐԱԳԻՆՆԵՐՈՒ ԳԱՂՁ...ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ ԱՐԱՐԱՏԻՆ» հատորէն, ուր մէկտեղուած են Հայկաի Համագայիի՝ ՀԵՄ մասնաճիւղի Հրատարակչական Յանձնախումբին կողմէ յայտարարուած Գրական Մրցանակի մրցանակակիրներուն գրական գործերը (20/03/1993, նուիրուած հայ եւ արաբ ժողովուրդներու բարեկամութեան):

²Պատմութեան հեղինակն է սուրիացի ժամանակակից մտաւորական եւ գրող՝ Ֆաուզ Մրզեյեք: Ան իր պարզ ու հաղորդական ոճով եւ գեղարուեստական ուրոյն արտայայտութիւններով՝ ներկայացուցած է թրքական անմարդկային եաթաղանը, վեր բերելով արաբ ժողովուրդի մարդկային ազնիւ կեցածքը: Սոյն պատմութեանը արժանացած է Դատական Կազմի յատուկ ուշադրութեան: Հատորը հրատարակուած է Հայկաի Համագայիի՝ ՀԵՄ մասնաճիւղի Հրատարակչական Յանձնախումբին կողմէ, 1993-ին «Տալ ու-Հիւար» Հրատարակչատունէն, Լաթաքիա-Սուրիա:

*Սուրիական ժամանակակից գրականութեան ծանօթ դէմքերէն՝ սուրիացի մտաւորական եւ գրող Ֆաուզ Մրզեյեք՝ ծնած է Սուրիոյ Հայկա քաղաքը: Նախնական, միջնակարգ եւ երկրորդական ուսումը ստացած է Հայկաի մէջ, համալսարանական բարձրագոյն կրթութեան հետեւած է Հայկաի Պետական Համալսարանի՝ Բժշկական Ֆակուլթէին ներս, եւ վկայուած՝ որպէս բժիշկ: Ֆաուզ Մրզեյեքի գրական արժանիքները եւ հետաքրքրութիւնները ի յայտ եկած են ուսանողութեան տարիներէն: Ան իր կեցածքով եւ գրիչով գորակցութիւն յայտնած է իրաւագրկուած խաւին եւ պայքարած է բռնատիրութեան դէմ, նաեւ ստորագրած է գրական եւ հասարակական յօդուածներ՝ արաբական թերթերու մէջ:

«ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ» ՅՂԱՅԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆԸ



Խ. Տեղ Ղուկասեան

Ուլքրանիոյ մէջ Ռուսիա «ցեղասպանութիւն» կը գործէ, յայտարարեց ԱՄՆ-ի նախագահ Ճոզէֆ Դայտըն, բայց զգուշացումը միանշանակ չընդունուեցաւ, արձագանգները եղան բազմաբնոյթ: Ինչ որ, սակայն, մտահոգիչ է՝ նման ծանր ամբաստանութեան անհետեւանք մնալն է. թերեւս ալ այդ ենթադրութեամբ ալ կատարուած է, այսինքն՝ յայտարարութիւնը կրնայ զգայացուցնել ըլլալ, բայց մնալ անհետեւանք:

Միջազգային քաղաքականութեան մէջ դեր ու կշիռ ունեցող պետական ղեկավարը մը կը սպասուի իր հանրային ելոյթներու լրջութեան ու պատասխանատուութեան գիտակցիլ: Այս մէկը, գիտե՞ք, շատ անելի տեսութիւն է քան իրականութիւն: Ի վերջոյ, քիչ չեն պետական այն գործիչները, որոնք կամայ թէ ակամայ անկուրջ յայտարարութիւններով հանդէս եկած են,



Եւ կու գան: Ի մասնաւորի քաղաքական գործընթացներու մէջ ընկերային ցանցերու ներգրաւումն է ի վեր: Կրնանք մինչեւ իսկ հարցականի տակ առնել ընկերային ցանցերով շատ արագօրէն տարածուող հաղորդակցութեան այս ժամանակներուն քաղաքական յայտարարութիւններու լրջութեան ենթադրութիւնը, երբ անոնց մեծ մասը մոռացութեան կը տրուի այնքան արագ որքան պահ մը առաջ միայն տարածուած էր աշխարհով մէկ: Ընկերային ցանցերը նաեւ շատ քաշողական ըրած են ամբոխահաճոյթեան փորձութիւնը: Այդ անլրջութեան հետեւանքները, սակայն, կրնան ըլլալ եւ շատ ծանր, որքան ալ որ այդ հետեւանքներու պատճառային յայտարարութիւնը փորձուի մոռացութեան տրուիլ, լռութեան դատապարտուիլ, չիշատակուիլ երբեք նոյնինքն պետական այն անձնաւորութեան կողմէ, որ կատարած է զայն:

Պէտք է յիշեցնել «Արցախը Հայաստան է եւ վերջ»-ը, որուն պատասխանատուութեան ոչ գիտակցութիւնը ունեցաւ, ոչ ալ այդ պատասխանատուութիւնը երբեւիցէ ստանձնեց անոր հեղինակը... Յայտարարութիւնը այսօր չի յիշուի, որովհետեւ, պիտի ընդունի դաժան իրականութիւնը, անոր շատ ծանր գինը հեղինակը ինք չվճարեց: Բայց, ահաւասիկ, մինչ քառասունչորսօրեայ Պատերազմի աղետալի հետեւանքներուն եւ Հայաստանի թէ Արցախի ներկայ խիստ խոցելի եւ կախեալ իրավիճակի պատասխանատու իշխանութեանց սատար կանգնած օրկանական մտաւորականները կրնան իրենք իրենք թոյլ տալ մոռացութեան մատնել նման յայտարարութեանց հետեւանքները, զայն համարել ինչ որ ըսենք «սխալմունք», «անըզգուշութիւն» կամ «թիրիմացութիւն», անհրաժեշտ է նաեւ քննադատական մտածողութիւն մը, որ զգաստ մնայ պետական անձնաւորութեանց հրապարակային ելոյթներուն եւ ուշադիր ըլլայ գործածուած եզրոյթներու ենթադրութեանց թէ հետեւանքներուն:

Այդ եզրոյթներէն մէկը ցեղասպանութիւնն է, որուն հանրային գործածութիւնը լուսարձակի տակ պէտք է առնեն ի մասնաւորի Սփիւռքի մտաւորականներն ու Հայ Դատի պահանջատիրութեան յանձնառուները:

Նախքան այս վերջին գաղափարին շուրջ խորհրդածութիւնը, որ Հայոց Ցեղասպանութեան 107-րդ տարելիցին առիթով գրուած այս ակնարկին նպատակն է, վերադառնանք նախագահ Պայտընի յայտարարութեան:

Գիտե՞ք, որ մեր հաւաքական երեւակայութեան մէջ տեղակայուած աշխարհէն լքուած զոհի հոգեբանութիւնը հաստատագրած է նման յայտարարութիւններու ընդհանրապէս *փայտեփայտ* հակազդեցութիւն մը, որ կարելի է ամփոփել «հապա մե՛նք» նախադասութեամբ եւ անոր հետեւող ամեն տեսակի ու գոյնի «տերտագրութեամբ»: Ցեղասպանութեան հարցով այդ մէկը հասկնալի է Երկրորդ Համաշխարհային Պատերազմէն յետոյ Ռաֆայէլ Լեւնքինի առաջադրանքով այդ յղացքի աշխարհ գալուն եւ միջազգային իրաւագիտութեան թէ քաղաքականութեան մէջ ամրագրուելուն (նախ Եւրոմայրիկի դատաւարութեան ժամանակ Նացի ոճրագործներուն դէմ յաղթական պետութեանց ամբաստանագիրներուն մէջ 1945-ին, ապա ՄԱԿ-ի 1948-ի Ցեղասպանութեան Համաձայնագրին մէջ) իրողութեան դէմ յանդի-

ման սփիւռքահայ մամուլի հակազդեցութեան պարագային: Բայց ոչ 21-րդ դարուն, երբ այդ բառի կարեւորութեան գիտակցից եւ այդ բառի գործածութեան ի խնդիր խորհրդանշական 1965 թուականէն ի վեր գօրաշարժի ենթարկուած սփիւռքահայութիւնը քաղաքականացաւ: Ցեղասպանութեան միջազգային ճանաչման պայքարով, որ Հայ Դատի պահանջատիրութեան կորիզը եղած է, ու կը մնայ: Այդ պայքարը առաջ տարաւ պետականագուրկ քաղաքացիական հասարակութիւն մը՝ Սփիւռքը, որ համաշխարհայնացումէն առաջ իսկ գիտցած էր ինքնակազմակերպուիլ որպէս աշխարհատարած ցանց, եւ ունեցաւ իր յստակ յաջողութիւնները: Անոնց վերջիններէն, եւ անկասկած ամենակարեւորներէն է Հայոց Ցեղասպանութեան 106-րդ Տարելիցին Սպիտակ Տան մէջ հազիւ չորս ամիս առաջ հաստատուած Պայտընի կողմէ եզրոյթին գործածութիւնը:

Թէ ինչո՞ւ Պայտըն, եւ ոչ իրմէ առաջ որեւէ այլ ԱՄՆ-ի նախագահ «ցեղասպանութիւն» գործածեց (ի բացառութեամբ Ռոնըլտ Ռեյքընին, որ 1981-ին գործածեց յղացքը եւ ցարդ չենք գիտեր թէ ինչո՞ւ երբեք չյաջողեցանք օրին այդ իրողութեան տալու իր կարեւորութիւնը) արդէն քննարկուած է եւ տակաւին կարելի է քննարկել: Յստակ է սակայն, որ Պայտըն այնքան ալ թեթեւամիտ կերպով, կամ որեւէ քաղաքական «ակնկալիք»ով չէ, որ այդ ծանր կշռոյթի յղացքը գործածեց 24 Ապրիլ 2021-ին: Ուլքրանիոյ մէջ Ռուսիոյ կողմէ գործադրուող ցեղասպանութեան իր ամբաստանութիւնը սակայն տեղի տուաւ զգուշութեան հրաւերներու: Ֆրանսայի նախագահ Էմմանուէլ Մաքրոնը առաջինը եղաւ ըսելու, որ պետք չէ հռետորաբանութիւնը մագլցումի տանիլ, եւ կոչ ուղղեց զգոյշ ըլլալու նման եզրոյթներու գործածութեան մէջ: Ի մասնաւորի երբ, ըստ Մաքրոնի, ռուսերը եւ ուլքրանացիները «եղբայր ժողովուրդներ» են: Յղացքի գործածութեան մէջ զգուշացան նաեւ ԱՄՆ-ի բարձրագոյն պաշտօնակատարները, ինչպէս կը հաղորդեն Նոյն երկրի թերթերն ու լրատու գործակալութիւնները: Եւրոպայի Անվտանգութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութիւնը (ԵԱՀԿ) հաղորդագրութեամբ մը հանրութեան յանձնեց տեղեկագիր մը, ուր փաստացի տուեալներ կան Ուլքրանիոյ մէջ Ռուսիոյ կողմէ միջազգային մարդասիրական օրէնքի խախտումին, որոնք կարգին՝ մայրատուն-հիւանդանոցի մը եւ որպէս ապաստարան գործածուող թատերասրահի մը ռմբակոծումը Մարիուպոլի մէջ: Պայտընի յայտարարութեան սպասելիօրէն ձայնակցեցաւ Ուլքրանիոյ նախագահ Վլատիմիր Զելենսքի:

Ռուսիա, անշուշտ, մերժեց ամբաստանութիւնը եւ Զելենսքի խօսնակ Տմիթրի Փեսքով զայն «անընդունելի» նկատեց: Հարցը այն է, որ Փութին ինք գործածած եւ շահագործած էր ցեղասպանութեան յղացքը Ուլքրանիոյ վրայ իր յարձակումը արդարացնելու համար, եւ այս դեռեւս 2014-ին, երբ միջամտեց որպէս թէ պաշտպանելու համար երկրի արեւելեան շրջաններու ռուսամետ բնակչութիւնը նման սպառնալիք: Արդիւնքը, Դրիմի կցումը եւ ռուսական ներկայութիւնը այդ շրջաններուն մէջ, մեծապետական քաղաքականութեան մը ծրագիրներ են, ոչ թէ ցեղասպանութեան կանխարգիլման որեւէ մարդասիրական նպատակ: Փութինի կողմէ յղացքի շահագործման միւս փաստը Ուլքրանիոյ «ապանափայտացում»ն էր, եզրոյթ մը որ առնչակից է ցեղասպանութեան սպառնալիքի առկայութեան: Պատճառաբանութիւնը համոզիչ չէ բնաւ: Ո՛չ թէ որովհետեւ Ուլքրանիոյ մէջ չկան ֆաշական թէ նացիական հակումներով հատուածներ, այլ՝ թէկուզ եւ այդ հատուածներու առկայութիւնը շատ հեռու է ամբողջ երկրի մը նացիական որակելու ճիգի որեւէ համոզիչ ենթահող ստեղծելէ: Ի վերջոյ, Ռուսիոյ մէջ ալ կան նման խմբաւորումներ, որոնք վայրագութեանց մասին արձագանգած է եւ ռուսական, եւ միջազգային մամուլը ոչ շատ հեռու անցեալին:

Ուլքրանիոյ կառավարութեան նացիական մեղադրանքը ունի նաեւ իր նախընթացը. 1946-էն 1948 տարիներուն, երբ Նորակազմ ՄԱԿ-ի ոլորտին մէջ բանակցութիւններ եւ բանավեճեր կը ծաւալէին Ցեղասպանութեան դէմ Համաձայնագրի բովանդակութեան մասին Ստալինեան խորհրդային Միութեան աշխոյժ մասնակցութեամբ, Մոսկուա պնդած է ցեղասպանութեան ոճիրը բացատրող Ռաֆայէլ Լեւնքինի առաջադրած երեւոյթներուն մէջ ներառել ֆաշականութիւնը որպէս ցեղասպանութեան յանգեցնող սպառնալիք: Միեւնոյն ժամանակ, սակայն, դէմ արտայայտուած է Լեհ իրաւագետի կողմէ նախատեսուած քաղաքական տարբերութիւններու հիման վրայ հաւաքականութեան մը գոյութեան իրաւունքի մերժումի կէտին: Տարբերութիւնը պարզ է. առաջինին պարագային կայ գաղափարախօսական ուղղութեան, մինչդէռ քաղաքական պատճառներու հիմնաւորումը շատ անելի ընդհանրական է, եւ այն ժամանակ, կրնար լուսարձակի տակ բերել Ստալինեան բռնատիրութեան մաքրագործումները, որոնք բոլորն ալ իրականացած էին համայնաւար վարչակարգին դէմ քաղաքական տարակարծութեան ճիշդ թէ հնարովի ամբաստանութեանց հիման վրայ: Պէտք չէ նաեւ անտեսել, որ ուլքրանացիներու հաւաքական յիշողութեան մէջ կենդանի է ստալինեան բռնապետութեան օրերուն սովահարութեան մէկ միլիոնէ անելի գոհերու Հոլոտոմորը, որ ուլքրանացիք կը պնդեն, արդիւնք է Մոսկուայի մէջ Ստալինի կողմէ առնուած քաղաքական որոշումի: Ցեղասպանութեան դէմ ՄԱԿ-ի համաձայնագրի վերջնական փաստաթուղթին մէջ չէ ներառուած ֆաշականութեան մասին խորհրդային առաջարկը, բայց նաեւ ցեղասպանութիւն չի համարուի քաղաքական որդապատճառներով որեւէ հաւաքականութեան դէմ հալածանքները, որոնք նպատակ կը հետապնդեն այդ հաւաքականութեան ոչնչացումը:

Փութինի կողմէ ցեղասպանութեան յղացքի շահագործումը ունի իր նախընթացը ի դէմս ԱՄՆ-ի մեծապետական քաղաքականութեան: 2001-3 թուականներուն, Ճորձ Պուշի վարչակարգի յայտարարած «Ահաբեկչութեան

«ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ»...

Սկիզբ՝ էջ 10

դեմ Պատերազմ»ի ոլորտին մեջ, Պետքարտուղարությունը, ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովին, Սուտանի վարչակարգը ամբաստանեց Հարաւային Սուտանի ժողովուրդին ցեղասպանութեան ենթարկելու յանցագործութեամբ, ինչ որ ճիշդ էր: Միջազգային Զրեական Ատեանը մինչեւ իսկ Սուտանի վարչակարգի ղեկավար Օմար ալ-Պաշիրին դեմ դատական գործ բացաւ: Սակայն երբ Սուտան համաձայնեցաւ գործակցիլ ԱՄՆ-ի հետ «Ահաբեկչութեան դեմ Պատերազմ»ին մեջ, Պետքարտուղարությունը ետ կեցաւ ցեղասպանութեան ամբաստանութեան ընթացք տալու իր առաջադրանքէն: Ինչ որ այդ ծանրագոյն ոճի իր իմաստին ու կարելիութեան մեծ հարուած հասցնել կը նշանակէր: Պետքարտուղարությունը, փաստօրէն, շահագործեց յղացքը քաղաքական հեռանկարներով, նսեմացուց ցեղասպանութեան կանխարգիլման համամարդկային յանձնառութիւնը:

Մէկ այլ ցաւալի օրինակ է Սուրիոյ թէ Իրաքի մէջ ՏԱՀԵՇ-ի բարբարոսներուն յայտարարուած նպատակը՝ Միջին Արեւելքի մէջ վերջ տալու քրիս-



տոնեական ներկայութեան: Իրենց վայրագութիւնները մանրամասնօրէն փաստագրուած են եւ երբեք քրիստոնեական ներկայութիւնը իր ծննդավայրին մէջ այնքան վտանգուած չէ եղած: Այդուհանդերձ, Արեւմտեան պետութիւնները երբեք այնքան վճռական չէղան ՏԱՀԵՇ-ի բարբարոսներուն, ինչպէս նաեւ Թուրքիոյ նման անոնց գործունեութեան նեցուկ կանգնող պետութիւններուն դեմ միջոցառումներու որդեգրման մէջ:

Վերադառնալով Պայտընի յայտարարութեան, անհրաժեշտ է նաեւ հիմնական նկատողութիւն մը. ԱՄՆ-ը այն պետութիւններէն է, որ չէ ստորագրած Միջազգային Զրեական Ատեանը ստեղծած Զոմբի 1998-ի Զամաձայնագիրը...

Այս բոլորը ինչո՞վ առնչակից են Հայոց Ցեղասպանութեան մէկ կողմէն Տարեկիցի առիթով խոսումներու, մանաւանդ որ, պարզ է, անմիջական կապ չկայ Պայտընի յայտարարութեան, Ռուսիոյ հակադարձութեան, թէ 21-րդ դարու սկիզբէն ի վեր իրերայաջորդ ճգնաժամերու ընթացքին մեծապետական քաղաքականութեան մէջ ցեղասպանութիւն յղացքի շահագործումի երեւոյթներուն եւ հայկական իրականութեան միջեւ:

Հարցը «ցեղասպանութիւն» յղացքն է, ու քաղաքական շահագործումով անոր նսեմացումը, կամ, ակելի ճիշդ, *պանայիզացումը*:

Սփիւռքի համար չկայ եւ ոչ մէկ ուրիշ յղացք, որ այնքան կեդրոնական եղած է որքան Ցեղասպանութիւնը՝ Մեծ Եղեռնի Յիսուներորդ Տարեկիցի յաջորդած ինքնութեան քաղաքականացման գործընթացին համար: Եսասմանակներու պայքար ու գոհողութիւն եղած է պետականագուրկ քաղաքացիական հասարակութեան մը համար, որ Սփիւռքն է նախ մոռացութենէ դուրս բերելու եւ միջազգային օրակարգին դնելու Հայոց Ցեղասպանութիւնը: Անոր ուրացման թրջական քաղաքականութիւնը մինչեւ այսօր սպառնալիք մըն է, որուն համար միշտ պիտի մնալ զգաստ: Ցեղասպանութեան միջազգային ճանաչումը, իր բոլոր սահմանափակումներով, կարելի յառաջընթաց արձանագրած է, այնքան կարելի որ Հարիւրերորդ Տարեկիցին արդէն կար պահանջատիրութեան պայքարը արդարահատոյցի հանգրուանին փոխարդելու ինքնավստահութիւն, առանց երբեք հրաժարելու ճանաչման ճիգ երէն եւ, մանաւանդ, առանց երբեք անտեսելու թրջական ժխտողականութեան ակելի ուժեղացող քաղաքականութիւնը դիմակայելու հրամայականը: Աւելին, արդարահատոյցի համար արդէն կան ճամբու քարտեզներ, որոնք, դժբախտաբար, Հարիւրերորդ Տարեկիցէն ի վեր տակաւին գործնական հունի չեն դրուած:

Հայաստանի անկախացումով, թէեւ որոշ ուշացումով, Ցեղասպանութեան հարցը մտաւ արտաքին քաղաքականութեան օրակարգին: Անոր հետապնդումը, սակայն, առաջ տարուեցաւ վերիվայրումներով: Եւ ակելի «վար» քան «վեր»։ Լեւոն Տէր Պետրոսեանէն ժառանգ մնացած «Թուրքիոյ հետ առանց նախապայմաններու յարաբերութիւններ»ու մեկնաբանութիւնը միշտ ալ ենթակայ եղաւ օրուան իշխանութիւններու քաղաքական նախապատուութիւններու, եւ ինչ որ «Պետական մտածողութիւն» մը երբեք չհասկցաւ/չուզեց այդ հիմնախնդրին ռազմավարական կարելիութիւնը ընկալել թէկուզ եւ Հայաստանի նման փոքր, աշխարհաքաղաքականօրէն մեկուսացած եւ խոցելի երկրի մը միջազգային ներկայութեան նպատակով:

Զառասուներօրօրեայ Պատերազմէն յետոյ կրկին օրակարգի վրայ է եւ ընթացքի մտած հայ-թրջական յարաբերութիւններու հարցը: Այդ բանակ-

ցութեանց արդիւնքներուն մասին կարելի չէ տակաւին ոչ մէկ ենթադրութիւն ընել: Բայց պարզ է, որ պարտուած երկիր մը եւ բանակցութիւններու սեղանին նստած պարտուած իշխանութիւններ ակելի հակամետ են զիջելու քան դիմադրելու թրջական պայմանաւորումներուն, որոնք միշտ եղած են եւ այսօր առկայ են ակելի քան երբեք: Այդ բանակցութիւնները կը տարուին Հայաստանի ռազմավարական դաշնակից եւ պատերազմէն յետոյ երկրի եւ Արցախի անվտանգութեան միակ երաշխիք Մոսկուայի կողմէ, իրողութիւն մը, որ շատ հեռու է միտարարական ըլլալէ: Պիտի ընդունիլ նաեւ, որ ի տարբերութիւն Փորթոքուլներու տարիներուն, այսօր շատ ակելի դժուար է այդ բանակցութիւններուն դեմ վճռական «Ո՛չ»-ով մը ծառանալ, ինչպէս այդ շարժումը այն ժամանակ արդարացիօրէն ծնունդ առաւ Սփիւռքի մէջ եւ ծաւալեցաւ հասնելու համար հայրենի հայութեան:

Արդ, ի՞նչ տեղ պիտի ունենայ Ցեղասպանութեան հարցը յարաբերութիւններու «նորմալացման» այս գործընթացին մէջ: Վարչապետ Նիկոլ Փաշինեանի յայտարարութիւնները, ըստ որոնց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործին լոկոմոթիվը Սփիւռքեան կազմակերպութիւններ եղած են, կը յուշէ հարցն անգամ մը եւս ձեռք քաշելու, անոր կարելիութիւնը նսեմացնելու վտանգաւոր նախատրամադրութիւն մը: Միեւնոյն ժամանակ սակայն, հայկական դիւանագիտութիւնը չէ հրաժարած միջազգային հարթակներու վրայ Ցեղասպանութեան հարցով նախաձեռնութիւններէ: Առաւել, բնաւ հարցականի տակ պիտի չընել որ հայրենի ժողովուրդին մօտ առկայ է Ցեղասպանութեան հարցին կենսական կարելիութիւնն ու յանձնառութիւնը, եւ որ Ծիծեռնակաբերդի Ցեղասպանութեան Յուշահամալիրը նուիրուած է հարցը հասարակական եւ ակադեմական ամեն ոլորտներու մէջ օրակարգի պահելու եւ այժմեականացնելու գործին:

Հայ-թրջական յարաբերութիւններու միջպետական բանակցութիւններու այս փուլին հետեւաբար, Սփիւռքի մէջ Հայ Ղաթի պահանջատիրութեան համար առաւելի կենսական կը դառնայ ցեղասպանութեան յղացքի միջազգային գործածութեան ամեն իրադարձութեան հետեւիլը, քաղաքացիական հասարակութեան ոլորտին մէջ ամրակայել հայրենի հողին վրայ անոր յանձնառու ժողովրդական թէ ակադեմական շրջանակներու հետ կապերը եւ ամրակայնել միջազգային բեմին վրայ ցեղասպանութեան կանխարգիլման հետամուտ բոլոր կազմակերպութիւններու հետ համագործակցութիւնը: Հայ-թրջական յարաբերութիւններու թէկուզ եւ «նորմալացման» հեռանկարով զգոյշ պիտի ըլլալ Ցեղասպանութեան միջազգային ճանաչումն ու արդարահատոյցը հարցականի տակ դնող կողմի փրոթոքը:

ՀԱՅԿԱԿԱՆ

Սկիզբ՝ էջ 9

Օր մը, մինչ Մարալ Նոյն տեղը նստած էր մտածումներու մէջ խորասուզուած եւ շրջապատէն անջատուած, կէս քուն՝ կէս արթուն վիճակին մէջ երազ մը տեսաւ:

Երազին մէջ ձի մը, յովազ մը, ցուլ մը եւ քարայծ մը դէպի իրեն մօտեցան, դիմացը խոնարհեցան եւ ոտքերուն առջեւ նստան:

Մեծապէս գարմացած Մարալ հարց տուաւ.

–Ո՞վ էք դուք:

–Մա՛յր, մենք քու գաւազներդ ենք, – անոնք միաբերան պատասխանեցին:

–Ես ինչպէ՞ս կրնամ գաւազ ունենալ, հարսանիքս անաւարտ մնա՛ց, – շարունակեց Մարալ:

–Մա՛յր, քու հարսանիքդ իր լրումին հասա՛ւ... սաղմերը արիւնով պատուաստուեցան, մենք արեան գաւազներն ենք, մենք չենք մոռնա՛ր:

–Դուք ուրկե՞ր կու գաք եւ ի՞նչ կ'ուզէ՛ք:

–Մենք, քու գաւազներդ, աշխարհի չորս ծագերէն կու գանք, անիրաւութիւնը մեզ աշխարհացրիւ դարձո՛ւց...: Մենք եկանք՝ որպէսզի գօրակցինք քեզի, առանց քեզի մենք կեանք չունի՛նք:

–Սիրելիներ՛ս, ինչպէ՞ս կրնաք օգնել ինձի, կարելի՞ է դարձեալ ըլլալ այնպէս, ինչպէս որ էինք, – տխուր պատասխանեց Մարալ:

Յովազը ոտքի կանգնելով ըսաւ.

–Մա՛յր իմ, ես Արեւելքէն կու գամ եւ ես քեզի ուժ ու իմաստութիւն պիտի տա՛մ:

Յուլը շարունակեց.

–Արեւմուտքէն կու գամ, մա՛յր իմ, ես քեզի գիտութիւն եւ իմացութիւն պիտի տա՛մ:

Քարայծը ըսաւ.

–Մա՛յր իմ, ես Հիւսիսէն կու գամ, ես քեզի համբերութիւն եւ կորով պիտի տա՛մ:

–Իսկ ես Հարաւէն կու գա՛մ, վեհանձնութիւն եւ ազնուութիւն պիտի տամ քեզի, – ըսաւ ձի:

Նոյն պահուն, փառահեղ արծիւ մը սաւառնեցաւ, Մարալին դիմաց կեցաւ եւ յարգալիկ նայեցաւ աչքերուն:

–Սիրուն արծի՛ւ, դուն ուրկե՞ր կու գա՛ս, – հարցուց Մարալ:

–Մա՛յր իմ, ես ԱՐԱՐԱՍ ԵՆ կու գամ... եւ ես քեզի երկա՛ր... երկա՛ր կեանք պիտի տամ...:

ԱՄԵՆԱԿԱՐՈՂԻՆ ԳԱՐՈՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ



Մարիանա Պերթիզյան-Ղազարյան

Եւ եթէ յանկարծ քո ճանապարհին Նախապապերիդ դու չհանդիպես, Ուրեմն՝ սխալ ճամբով ես գնում, Եւ ոչ մի հրաշք չի փրկելու քեզ:

Ռազմիկ Ղառոյեան

Հողին երազն է, որ սկսած է արեւի ճառագայթներու բարի շերմութեան հովանիին տակ ծաղկիլ, բարգաւաճիլ: Եղանակներու բոլոր վերիվայրումները, անձրեւները, ամպրոպն ու փոթորիկը բնութեան գաղտնի եւ խորհրդաւոր միջոցներն են, ծիլն ու ծաղիկը, ոստն ու սաղարթը ամրապընդող, ցօղունը զօրացնող, հողին թարմ աւիշ պարգեւող, արտաքնապէս բիրտ, բայց ի շահ հասակ առնող բոյսին ստեղծուած բարի բալասանը: Նոյն-նիսկ ձիւնածածկ տարածքներու վրայ, խաղաղ կարծուած սպիտակ մակերեսին տակ, կեանքի եւ գոյատեւման անդուլ պայքար կը մղուի: Ծատ չանցած ծիլ կու տան հողին տակ թաքնուած սերմերը, ու գարունը իր գարթունքը կ'աւետէ:



Ամիսներ երկար, բնութիւնը իր ճմրաքունին մէջ գարնան գալստեան գեղեցիկ երազը կը հիւսէ:

Մարդը երբեք չի կրնար դադրիլ երազելէ: Յաճախ կը կործանին կամ կը վիրաւորուին կատարելութեան տեսլականով հիւսուած մարդկային երազները: Հաւաքական, թէ անձ-

նական մեր երազները կրնանք սպանել կամ հիասթափիլ անոնցմէ, բայց երբ կը դիտենք բնութիւնը, նոյնիսկ գարունը ուշացած, որ մեծ ուրախութիւն, խի՛նդ եւ կեանք կը բերէ իր հետ՝ երկար սպասուած ցուրտ եւ գորշ օրերէ ետք ու կը պատրաստուի կրկին հեռանալ իր շրջանը կատարելու, մենք եւս կը լեցուինք ոգեւորութեամբ եւ յոյսով:

Օղակ մըն է շնչող կեանքը իր բոլոր երեւոյթներով: Մարդն ալ իր ընթացքը կատարելէ ետք, կը վերադառնայ իր սկզբնաղբիւրին:

Քանի որ սահմանափակ է մարդու կեանքին տեսողութիւնը, ան պարտաւոր է իւրաքանչիւր օր ծաղկիլ, գարնան վերածուիլ, հակառակ հողմերուն եւ կեանքի բոլոր արհաւիրքներուն: Մինչ բնութեան համար միայն գարունը սահմանուած է ծաղկելու եւ պտուղ տալու՝ իբրեւ եղանակ:

Միայն գոյութիւն ունենալու համար ստեղծուած չենք: Երկրագունդի վրայ իւրաքանչիւր շունչ ունեցող արարուած է նախախնամութեան երազներն ու նպատակները իրականացնելու համար: Ամբողջ ստեղծագործութիւնը շարժման եւ պայքարի մէջ է:

Մեր դատարկ կարծած, անտես կամ աներեւոյթ տարածքները նոյնիսկ, որոնք շատ անգամ նշանակութիւն չունին մեզի համար, ստեղծուած են յատուկ նպատակով, որոնք իրենց պարտականութիւնները կը կատարեն ամենայն բծախնդրութեամբ: Բնութեան մէջ չկան անիմաստ գոյութիւններ:

Ինչպէս մեր մարմնին բոլոր բջիջները մեծ ներդաշնակութեամբ կը գործեն քունի ընթացքին, նոյնպէս ալ արեւը, լուսինը եւ բոլոր երկնային մարմինները ամենայն ճշգրտութեամբ ստեղծուած են մեր բարօրութեան համար:

Պէտք է միշտ գիտակցիլ, որ մենք միայն այս կեանքին համար չէ որ գոյութիւն ունինք:

Մենք չէ, որ կը խօսինք, այլ մեր նախահայրերը կը խօսին մեր միջոցով: Անոնց ձայնը երբեք չեն անհետանար, կը շարունակեն ճամբորդել տիեզերական տարածքով: Եթէ նոյնիսկ գաւնը գտնելու ճամբան կորսնցնենք, անոնց ձայնը կենդանի է եւ կ'ապրի. կը գտնենք մեր նախահայրերը, եթէ քալենք այդ ձայնին ուղղութեամբ: Անոնց կիսատ մնացած կամ բռնաբարուած երազները պարտաւոր են իրականացնել՝ անկատար տեսչերը կեանքի կոչելու: Անոնց հոգին կենդանի է, իսկ արեան հոսքը կը շարունակուի մեր երակներով: Մեզի յաջորդող սերունդները դարձեալ մեր մէջ ներկայ են, իսկ անոնց սիրտերը կը բաբախեն մեր ընդմէջէն:

Անցեալն ու ապագան մեր մէջ են, մենք ենք ժամանակները իրար կապող օղակը, մեր ներկայի շնչառութեամբ եւ գիտակից գոյութեամբ: Մեր դիմագիծերուն մէջ կը ժպտին, նաեւ կ'արտասուին մեր նախնիները: Մեր ընդմէջէն անոնք կ'ապրին եւ կը գոյատեւեն:

Անոնց հասցէն մեր մէջ է, անոնց լոյսը կը լուսաւորէ մեր ետքիւնը: Ուր որ ստուեր կայ, կայ նաեւ լոյս: Անոնք կը ծաղկին մեր մէջ եւ կը սպասեն, որ ջրենց իրենց հողը, մեր հողը: Հողը մենք ենք հիմա...

Մեր մէջ կ'ապրին բանակներ՝ գացողներն ու գալիքները: Մեր մէջ է նաեւ աստղերու փոշին, այդ նոյն նիւթով ստեղծուած ենք նաեւ մենք՝ այն

Պրիմակէտ

ԳԻՏԷՐ



Մարուշ Երամեան

Մեր Տէր Յիսուս Քրիստոս, երբ խաչին վրայ իր մարդկային բնոյթով կը տառապէր եւ «Հեռացո՛ւր այս բաժակը» կը խնդրէր Աստուծմէ, իր աստուածային բնոյթով գիտէ՞ր թէ երեք օր վերջ յարութիւն պիտի առնէ:

Նայեցէ՛ք այս նկարին եւ տեսէ՛ք Աստուծոյ աչքերուն մէջ ցաւի եւ տառապանքի արտայայտութիւնը. անշուշտ ասիկա նկարող արուեստագետին տաղանդին հաստատումն է, բայց նաեւ մեր մէջ կ'արթնցնէ մեծ տագնապ, որովհետեւ գիտենք թէ ի՞նչ կը սպասէր Իրեն: Բարեբախտաբար ծանօթ ենք նաեւ Յարութեան հրաշքին:



Նոյնը չենք կրնար ըսել մեզի համար, դժբախտաբար, մենք որ չունինք իմացութիւնը ապագային եւ չենք գիտեր թէ ի՞նչ կը սպասէ մեզի: Բարեբախտաբար ունինք հաւատք, որ կը փրկէ մեզ: Այս հաւատքն է որ այսօր, մէկ ու կէս միլիոն ջարդուած հայերու կողքին, ունինք փոքրիկ Հայաստան մը եւ տասը միլիոն մարդահամարով Սփիւռք մը:

Քաղաքս այցելած տիկին մը, որ կ'աշխատի Հայաստանի Ազգային Արխիւներուն մէջ, հետեւեալը ըսաւ մեր վերջին հանդիպումին.

–Մի՛շտ մեղադրած եմ արեւմտահայերը, որովհետեւ չեմ հասկցած, թէ գիտնալով որ Ջարդերը կը ծրագրուին եւ շատ շուտով պիտի գործադրուին, ոչինչ ըրին. մէկը Գրիգոր Զօհրապն էր, որ մինչեւ վերջ իսկ կը հաւատար թալեաթի հետ իր ունեցած բարեկամութեան. ի՞ր ունեցած, մինչ արիւնարբու այդ ոճրագործինը միայն չակերտաւոր բարեկամութիւն կրնար ըլլալ: Հիմա մենք նոյն վիճակին մէջ յայտնուեր ենք՝ գիտենք, թէ այս կշռոյթով ատրպէճանական-հայկական համաձայնութիւնները ո՛ր կը տանին մեզի, բայց նստած կը սպասենք, ո՛չ թէ օձին հմայքէն թակարդուած թռչունի պէս, այլ ձեռնակապուած ու բանտարկուած մարդոց անկարողութեամբ:

Այս երկուքը՝ Յիսուսի գեղանկարն ու այս տիկնոջ խօսքերը զիս հիմէն կը շարժեն:

Երբեւ մտածե՛ր ենք, թէ թուրքը, իր ամենէն մեծէն մինչեւ ամենէն փոքրը որքա՛ն հայրենասէր է, թէկուզ երբեմն կամ յաճախ ատիկա կ'ըլլայ ճնշումով եւ բռնութեամբ: Ի՛ր երկիրը մեծցնելու, հարստացնելու եւ զօրացնելու համար թուրքը միջոցներուն միջեւ խտրութիւն չի դնէր: Նոյնը կ'ընէ Ամերիկան, քիչ մը ավելի խորամանկութեամբ, քիչ մը ավելի աշխարհի աչքերուն փոշի ցանելով, քիչ մը ավելի այլ ազգեր ու երկիրներ իր հաշուոյն «աշխատցնելով»: Ի՛ր երկրին շահերուն համար:

Երբ հարիւրամեակը տօնեցինք, կարծեցիք թէ ա՛լ վերջացաւ մեր տառապանքը, մանաւանդ որ շատ երկիրներ պաշտօնապէս ճանչցած էին Հայոց Յեղասպանութիւնը, – Ի՛նչ հեգնանք, ճանչնալ եւ ընդունիլ որ արեւը արեւելքէն կը ծագի, – եւ ի վերջոյ Թուրքիան եւս, արդէն ամօթէն կարմրելով պիտի ընդունի եւ հատուցէ, կամ գոնէ ա՛լ դադրի իր զգուելի խաղերէն:

Եւ կրկին ու բիւրերորդ անգամ յուսախաբ եղանք:

Չէի՞նք գիտեր, որ ունենալ չի բաւեր, պահել պէտք է, չէի՞նք գիտեր, որ դիւանագիտութիւն ըսուած բան մը կայ մանաւանդ այսօր, եւ չէի՞նք անդրադարձած մեր իրականութեան՝ եթէ մեր կէսին ձեռքերը կապուած էին, միւս կէսը ազատ էր:

Երբ Ղազանչեցոցը գերի է եւ կիսաւեր, ես ինչպէ՞ս Անին ողբամ:

Աւագ շաբթուան արագ թաւալքին հետ, կարծես կը թաւալի հովէն քշուած եւ ուռչող ամպի նման մեր մտահոգութիւններուն փուշէ հսկայ գունդը, չէ, ի՛նչ կ'ըսեմ, մեր անգօր ցատումը:

Ընկերային ցանցերը, մանաւանդ Հայաստանի մեր բարեկամներուն գրառումները ուղղակի ահագնացող չափերու մտահոգութիւն կը կուտակեն մեզի համար. օրինակ այսօր.

«ՀՀ-ում ռուսալեզու դպրոցների ավելացման վերաբերելով ՌԴ արտգործնախարար Ս. Լավրովի յայտարարութեան մասին «Ազատութիւն» ռատիոկայանի հարցին պատասխանելով, ՀՀ կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնամարզի նախարար Դերենիկ Դումանեան ասել է նաեւ հետեւեալը. «Կոնկրետ այսօր խօսքը գնում է ռուսալեզու մեր հայրենակիցների, եւ ոչ միայն հայրենակիցների, նաեւ Հայաստան ժամանած ռուսալեզու գործարար միջավայրի համար, իրենց ընտանիքների անդամների համար ռուսալեզու կրթութիւն կազմակերպելու մասին»:

Որուն որպէս պատասխան կը կարդանք սփիւռքահայու մը գրառումը.

«Եթէ վաղը Սթամպուլի հայերի մի մասը, ինչ-ինչ հանգամանքների բերումով գայ ՀՀ, Սթամպուլում թուրքալեզու դպրոց յաճախած իրենց երեխաների համար թուրքերէնով դասաւանդող, այսինքն՝ թուրքական ղրպոց պիտի բացես»:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ՄՇԱԿՈՒԹ-ԱՅԻՆ ԵՂԵՌՆ



Րաֆֆի Զոյթոյան

Հայկական հարցի լուծմանն ուղղուած թուրքական գործելակերպի անբաժանելի մասը հա-

րացման գործին յանցակից են դարձնում նաեւ գինուորներին: Նշուած թուականներին վերջին-



1-1



1-2

մարուող մշակութային եղեռնը շարունակական բնոյթ է կրել ինչպէս Օսմանեան կայսրութեան, այնպէս էլ Թուրքիայի Հանրապետութեան օրոք:

Եթէ երիտթուրքերն Արեւմտեան Հայաստանի բնիկների ֆիզիքական բնաջնջմամբ երկրամասից վերացրին նաեւ նրանց ոչ նիւթական (սովորութեամբ, բարբառները, տեղանունները, ծեսերը եւ այլն) ու շարժական (ձեռագիր մատենաներ, եկեղեցական իրեր եւ այլն) մշակութային արժեքների մեծ մասը, ապա քեմալական Թուրքիան, որպէս հայերի դէմ իրագործուած ցեղասպանութեան ծրագրի շարունակութիւն, կանխամտածուած եւ գանգուածաբար ոչնչացրեց հայկական մշակութային անշարժ ժառանգու-



2-1



2-2



3-1



3-2

թիւնը:

Դեռեւս թուրքական հանրապետութեան ստեղծման առաջին տարիներից գործադրուող հայկական յուշարձանների՝ յատկապէս քրիստոնէական շէրտի վերացմանն ուղղուած պետական ծրագրին ահագնանում է 1940-1960-ական թթ., երբ թուրքական բանակի անմիջական ներգրամամբ ահռելի չափերի է հասնում անհետացուած յուշարձանների քանակը: Չարմանալի է, որ հայոց բնօրրանը սեփականացնելու մոլուցքով տարուած թուրքական իշխանութիւններն իրենց իսկ գոյութեամբ պատմական իրականութիւնը մատնանշող, ինչպէս նաեւ համաշխարհային



4-1



4-2



5-1



5-2

քաղաքակրթութեան համար չափազանց արժեքաւոր հայկական միջնադարեան ճարտարապետութեան նշանաւոր կառոյցների՝ հիմնովին վե-

ներիս մեղսակցութեամբ ոչնչացուել են, օրինակ, Շիրակաւանի Սբ. Ամենափրկիչ կաթողիկէ (897 թ.) (լուս.՝ 1-1 Ի դարի սկիզբ, 1-2 2006 թ.), Արգի-

նայի կաթողիկէ (990 թ.) (լուս.՝ 2-1 Ի դարի սկիզբ, 2-2 2011 թ.), Բագարանի անանուն (Ժ-ԺԱ դդ.) եկեղեցիները (լուս.՝ 3-1 Ի դարի սկիզբ, 3-2 2013 թ.), Խծկոնքի (լուս.՝ 4-1 Ի դարի սկիզբ, 4-2 2013 թ.) վանական համալիրը, Խնուս գաւառի Մժնկերտի Սբ. Կարապետ վանքը (լուս.՝ 5-1 Ի դարի սկիզբ, 5-2 2017 թ.):

Բագմաթի եւ անհերքելի փաստերը ցոյց են տալիս, որ հայկական յուշարձանների ոչնչացման գործընթացը 1970-ական թթ. առ այսօր անշեղօրէն շարունակոււմ է, սակայն կործանիչ ուժն արդէն գերազանցապէս ո՛չ թէ բանակն է, այլ պետական քարոզչութեամբ եւ անպատժելիութեամբ ոգեշնչուած տեղաբնակ գանձախոյզը:

Այստեղ յարկ է նշել նաեւ, որ թուրքական բազմալեզու հրատարակութիւնների թւում տասնամեակներ շարունակ լոյս են տեսնում այնպիսի աշխատութիւններ, որոնք ելնելով քաղաքական նկատառումներից, թաքցնում կամ նենգափոխում են պատմական իրողութիւնները՝ մոլորութեան մէջ գցելով թէ՛ սեփական ժողովրդին եւ թէ՛ մարդկութեանն ընդհանրապէս: Այսպիսով, ակնյայտ է, որ հայկական յուշարձանների ոչնչ-

ւացումը, դրան գուցահեռ պատմական խեղաթիւրումներով լոյս ընծայուող թուրքական բազմալեզու հրատարակութիւնները ծառայում են միեւնոյն նպատակին՝ Հայոց Հայրենիքի իւրացման ընթացիկ քաղաքականութեանը:

Վերոնշեալներին, որպէս ապացոյց ներկայացնելը Պատմական Հայաստանի գաւառներից ընդամենը մէկի՝ Խնուսի յուշարձանների այժմեան վիճակը (գաւառին վերաբերող հատորը՝ իմ հեղինակութեամբ, լոյս է տեսել սոյն թուականի Ապրիլին):

Այն ինչպէս Պատմական Հայաստանի ցան-

կացած այլ գաւառ հարուստ է եղել նիւթական մշակոյթի հնամենի եւ բազմազան յուշարձաններով: Դրանց մեծ մասը, սակայն, առհասարակ ոչ միայն գիտականօրէն չի ուսումնասիրուել, այլեւ նոյնիսկ չի ցուցակագրուել:

Այս առումով սոսկ ժժ. դարավերջին գործող կառոյցների (այժմ՝ յուշարձանների) թուաքանակին վերաբերող թռուցիկ տեղեկութիւններ են փոխանցում բացառապէս ժամանակի օսմանեան տարեգրքերը: Այսպէս՝ 1873-1894 թթ. Խնուսի ամբողջ կազայում յիշուում է նպատակին ծառայող 1 բերդ, 1882-1897 թթ.՝ 3, իսկ 1899-1900 թթ.՝ 4 կամուրջ, 1876 թ.՝ 20 բաղնիք:

1873-1874 թթ. յիշուում է 2, իսկ 1875-1900 թթ.՝ 3 աղօթատեղի-դամբարան:

1882-1892 թթ. յիշուում է 20, իսկ 1894-1900

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԵՏԵՒԱՆՔՆԵՐՈՒ ՎԵՐԱՅՈՒՄԸ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԳԵՐԽՆԴԻՐ



Դոկտ. Գեորգ Յակոբեան

Հայոց Յեղասպանության 107-ամեակը վերջին տասնամյակներու հայկական իրականության ամենէն վտանգաւոր ժամանակաշրջանին հետ կը գումարակալուի: Հայկական գոյգ պետութիւններուն՝ Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության անկախութիւնը, ինքնիշխանութիւնն ու գոյութիւնը լրջօրէն վտանգուած ու խոցուած են: ՀՀ-ի ներկայ ազգասպան ու պետականակործան իշխանութիւնները, փոխանակյանցագործ թուրքիստ ու Ատրպէյճանը միջազգային պատասխանատուութեան ենթարկելու համար պայքար մղելու, «խաղաղութեան դարաշրջան» կեղծ ու խաբէրայական օրակարգի քողին տակ հայկական հարցի անբանակցելի ու անքննարկելի իրաւունքները՝ (Օր. Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունք, ՀՀ-ի տարածքային ամբողջականութիւնը, Արցախի Անկախութիւն եւ միջազգային ճանաչում, Յեղասպանության հետեւանքներու վերացման իրաւունք) այս կամ այն չափով գիշած են կամ գիշելու կը պատրաստուին: Արցախեան վերջին պատերազմէն ի վեր, վերականգնումի եւ համազգային գորաշարժի ռազմավարութեան որդեգրման փոխարէն, պարտուողական տրամադրութիւններով փորձ կը կատարուի առաւել պառակտել ու բարոյալքել հայ հասարակութիւնը, տկարացնել պետական հաստատութիւններն ու պայքարի հաւաքական ոգին արմատախիլ ընել:

Յետեւաբար, հայ աշխարհով տագնապողներուն ծանրակշիռ ուշադրութիւնը այս օրերուն վերոնշեալ վտանգներուն վրայ կեդրոնացած է եւ ո՛չ



անպայման 107- ամեակի պարունակին մէջ՝ Հայոց Յեղասպանության հետեւանքներու վերացման պայքարին թափ տալուն: Մեր ժողովուրդին ու պետականութեան այս օրուան դիմագրաւած վտանգներուն արմատները (root causes) սակայն դեպի 1915-ի Յեղասպանութիւն կ'երթան: Այս իրողութիւնը պետք չէ անտեսել կամ մոռացութեան տալ: Մինչ օրս, Հայոց Յեղասպանության հետեւանքները չվերացնելը հիմնական պատճառներէն թերեւս գլխաւորն է, հայ աշխարհի դիմադրութեամբ ժամանակակից գոյութեան վտանգներուն:

Արտաքին ճակատի վրայ, Յեղասպանության միջազգային ճանաչումն ու հետեւանքներու վերացումը պիտի ապահովեր հայ ազգի եւ պետականութեան անվտանգութիւնը, որովհետեւ ցեղասպան ու ռճրագործ թրքական պետութիւնը ո՛չ միայն բազմապիսի վնասներու հատուցում կատարած պիտի ըլլար, այլ նաեւ միջազգային ու գործնական երաշխիքներ պիտի սահմանուէին անոր ցեղասպանական, փանթուրանական եւ ծաւալապաշտական քաղաքականութիւններէն հեռու պահելու համար: Արցախեան վերջին պատերազմը եւ անոր յաջորդող դեպքերը յստակօրէն կ'ամրապնդեն թուրքիստ ու Ատրպէյճանի որդեգրած ցեղասպանական քաղաքականութեան շարունակութիւնը, որ կարելի պիտի չըլլար դրսեւորել, եթէ 1915-ի Յեղասպանության հետեւանքները հանգամանօրէն վերացած ըլլային:

Աւելին. Յեղասպանության հետեւանքներու վերացումը ճամբայ պիտի հարթէ հայ-թուրք ժողովուրդներու իսկական եւ կայուն հաշտութեան ու յարաբերութիւններու բնականոնացման: Առանց Յեղասպանության հետեւանքներու վերացման խաղաղութեան ինչ պայմանագիր կամ ձեւաչափ ալ որդեգրուի թուրքիստ կամ Ատրպէյճանի հետ, այդ մակերեսային, անկայուն, խաբուսիկ ու ժամանակաւոր է, որովհետեւ իսկական հաշտութիւնն ու բարի-դրացիական յարաբերութիւնները կը հաստատուին միայն ու միայն արդարութեան վերականգնումի գործընթացով: Երկու ժողովուրդներուն միջեւ իսկական փոխվստահութեան, համերաշխութեան եւ հաշտութեան անկարելի է հասնիլ, առանց արդարութեան վերականգնման անցումային գործընթացին: Իսկ «արդարութեան վերականգնում» ըսելով հայ հասարակութեան ընկալումը միասնական պետք է ըլլայ, հիմք ունենալով Միջազգային Օրէնքի տրամադրութիւնները՝ Թուրքիոյ կողմէ պաշտօնական ճանաչում, ներողութիւն, վնասից հատուցում, կալուածներու եւ հողերու վերադարձ ու հատուցում, կրթութիւն, թրքական պաշտօնական պատմութեան խօսոյթի վերանայում, ոգեկոչում եւ Յեղասպանութիւնը չկրկնելու իրաւական-գործնական երաշխիքներ:

Ներքին ճակատի վրայ, Յեղասպանության հետեւանքներու վերացումը հայութեան հաւաքական վերքը կը սպիացնէ, ստորակայութեան, ստորկամտութեան, վախի ու անտարբերութեան որոշ հաւաքական բարոյութիւններու դրսեւորումներ կը փոխակերպէ, հաւաքական գարթօնքի ու ընկերահոգեբարոյական վերականգնումի կ'առաջնորդէ, ինչպէս նաեւ տնտեսական ու ֆինանսական հսկայական աղբիւրներ կը տրամադրէ պետականաշինութեան, հզօրացման, Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքերը ուժեղացնելու եւ հայ ժողովուրդի բարեկեցութեան մակարդակը բարձրացնելու:

Ահա թէ ինչո՞ւ մեր համազգային առաջնային գերխնդիրը 1915-ի Հայոց Յեղասպանության հետեւանքներու վերացումը պետք է մնայ: Այս հաստատումը չի նշանակեր, թէ որպէս մարտավարութիւն, մերթ ընդ մերթ համազգային առաջնահերթութիւններու կարգը կարելի չէ փոխել: Ընդհակա-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՂ...

Սկիզբ՝ էջ 13

թթ.՝ 220 գերեզմանոց: 1871-1872 թթ. յիշուում է 1, 1873-1874 թթ.՝ 3, 1875-1876 թթ.՝ 4, 1877 թ.՝ 5, 1882-1892 թթ.՝ 7, իսկ 1894-1900 թթ.՝ 13 մզկիթ: 1871-1872 թթ. յիշուում են 20, 1873-1874 թթ.՝ 3 1875-1877 թթ.՝ 25, 1882 թ.՝ 18, իսկ 1894-1900 թթ.՝ 20 վանք եւ եկեղեցի:

Գաւառում գործող քրիստոնեական հոգեւոր կենտրոններին վերաբերող վերջին տուեալները մօտ են նաեւ հայկական աղբիւրներից ստացուած տեղեկութիւններին, որոնց համաձայն՝ Մեծ եղեռնի նախօրէին հսուսի վիճակում յիշուում են գործող 7 վանք եւ 21 եկեղեցի, այլ տեղեկութեան համաձայն՝ 2 վանք եւ 20 եկեղեցի:



Համադրելով յատկապէս Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող հիմնադրամի՝ 1975 թ.-ից (նաեւ՝ 1994, 2010 եւ 2017 թթ.) իրարա-յաջորդ արշաւախմբերի կատարած դաշտային հետազօտութիւնների արդիւնքները, ըստ որի՝ գաւառում հաշուառուած 37 եկեղեցիներից 33-ը (90%-ը, ի դէպ, պահպանուած 4 եկեղեցիներից 3-ը ժայռափոր են եւ հետեւաբար դժուար ոչնչացուող), 6 վանքերից 4-ը (67%-ը, յատկանշական է նաեւ, որ այժմ գոյութիւն ունեցող 2 վանքերն էլ ժայռափոր են), իսկ 43 հայկական գերեզմանոցներից 27-ը (63%-ը, պետք է նշել նաեւ այն, որ որոշ չափով տեղորոշուող 16 գերեզմանոցների մեծ մասում համատարած ոչնչացուել են խաչքարերը, ինչպէս նաեւ արձանագիր եւ նախազարդ տապանաքարերը) հիմնահատակ աւերուել են, կարող ենք վստահաբար ասել, որ գաւառաբնակ հայութեան բնաջնջումից հետոյ մէկը միւսին յաջորդող թուրքական իշխանութիւններն այստեղ եւս կանխամտածուած հաշուեյարդար են տեսել՝ ոչնչացնելով հայկական պատմական յուշարձանների՝ յատկապէս քրիստոնեական ժառանգութիւնը (հսուսի յուշարձանների քարտու լուս.՝ 6):

Տուալի է նշել, որ անուանի յուշարձանագետ Ս. Կարապետեանի՝ Հայոց ծոր գաւառի հայկական պատմական յուշարձանների վիճակի մասին իրագեղումը լիովին համընկնում է նաեւ հսուսի յուշարձանների կացութեանը. «Ի մեծ ողբերգութիւնն հայ ազգի՝ թուրքական իշխանութիւնները նիւթական մշակոյթի հայկական յուշարձանները հենց սկզբից ընկալեցին որպէս բնիկներից պարպուած երկրամասի իւրացմանը խոչընդոտող եւ այդպիսով, ըստ էութեան, պատմական իրականութիւնը մատնող անխօս վկաներ, ուստի սկսած արդէն 1920-ական թուականներից՝ պետական մակարդակով լծուեցին (յուշարձանների համատարած ոչնչացման ծրագրին մասնակից է եղել բանակը) դրանք հետեւողականօրէն անհետացնելու անփառունակ գործին՝ արձանագրելով հայոց Հայրենիքում եւ հայերի նկատմամբ փաստացի գործադրուած երկրորդ՝ այս անգամ արդէն մշակութային ցեղասպանութիւնը»:

Հարկ է նկատել, որ նպատակամղուած ոչնչացման թիրախում առաջնահերթօրէն յայտնուել են նիւթական մշակոյթի քրիստոնեական շրջանի յուշարձանները (վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, խաչքարեր եւ տապանաքարեր պարունակող գերեզմանոցներ, հայերէն արձանագրութիւններ եւ այլն), է՛լ առաւել՝ դրանց պաշտամունքային հատուածը, որ, ըստ թուրքական իշխանութիւնների պատկերացումների, առաւել ցայտուն երարտայայտում յուշարձանների իրական պատկանելութիւնը:

Այսպիսով՝ Թուրքիայի կողմից բռնագրաւուած Հայոց բնօրրանի ցանկացած այլ գաւառի նման հսուսում տեղի ունեցածը եւս իրաւամբ կարելի է կոչել մշակութային եղեռն:

ռակը, մարտավարական մօտեցումը կ'ենթադրէ կեդրոնացում այն հարցերուն վրայ, որոնց բարոյք լուծման չհասնիլը, երկար կտրուածքի վրայ լրջօրէն կը վնասէ նոյնիման Յեղասպանության հետեւանքներու վերացման գործընթացին: Այսինքն, ինչպէս որ է կացութիւնը այս օրերուն, եթէ խնդրոյ առարկան ՀՀ-ի կամ Արցախի պետականութիւնն ու հայրենաբնակ ժողովուրդի ֆիզիքական անվտանգութիւնն ու գոյութիւնն է, անհրաժեշտ է, որ համազգային մակարդակի վրայ ուժերը լարուին եւ սահմանափակ կարողութիւններն ու միջոցները այս հրատա՛պ հարցերը լուծելու օգտագործուին: Բնականաբար, առանց պետականութեան եւ հայրենաբնակ հայրենակիցներու անվտանգութեան, շատ աւելի դժուար է (եթէ ոչ անկարելի) Յեղասպանության հետեւանքներու համակարգուած վերացման հասնիլ: Ազգային ռազմավարութեան մէջ սակայն, Յեղասպանության հետեւանքներու վերացումը բնաւ երկրորդական պետք չէ դասել, այլ՝ մի՛շտ, անկախ բոլոր գարգացումներէն, որպէս առաջնային գերխնդիր ու նպատակ ընկալել:

ՏԱՐՈՐԻՆԱԿ..., ԲԱՅՑ ԻՐԱԿ



Պարգև Ավագյան

«Ո՛չ ոք կրնայ ջնջել մեջես այն հաւատքը, թէ Աստուածային արդարութիւն կայ այս աշխարհի վրայ»:

«Ո՛վ մարդկային արդարութիւն, թող որ թընեմ քու ճակատիդ»:

Պատմութեան գիտելիքներս կը վերյիշեմ ու երկիրդով կը մտածեմ 107-ամեայ անցեալ ունեցող ոճիրի, Յեղասպանութեան մասին:

Անմարդկային ոճիւր մը արժանի է օրինակելի պատիժի մը:

Մինչեւ հոս ամեն ինչ պարզ է եւ ոչինչ կրնայ գարմացնել 21-րդ դարու մարդը:

Մշակոյթն ու պատմութիւնը, երգն ու երաժշտութիւնը, անականն ու լալկանը, ազգայինն ու յեղափոխականը, սիրայինն ու աշուղականը, գիրն ու գրականութիւնը, գիտելիքն ու գիտութիւնը, պարն ու ասմունքը, բեմն ու թատրոնը, մշակոյթի ստեղծման յենարաններն են:

Բայց անարդարութեան դեմ ծառանալն ու գէնք բարձրացնելը մշակոյթի ամբողջացումն է:

Պատմութիւն՝ խառնուրդ երկրի եւ երկնքի, հողի ու հոգիի, մութի ու լոյսի, ուր կը բնակին յիշատակներս, զգացումներս եւ տպաւորութիւններս:

Ապրիլ 24...

Արդէն նետած ենք բաճկոնը լալկանութեան ու հագած զգեստը ազգային հպարտութեան: Որդեգրեցինք ճանապարհ, որ որակուեցաւ ուրոյն, տոկուն, անսկուն: Իրաւատեր էինք ու դարձանք պահանջատեր:

Եւրոպայէն մինչեւ Մերձաւոր ու Միջին Արեւելք մեր դատը ժողովրդականացնելը պարտականութիւն էր, այլ՝ ազգային պարտաւորութիւն:

Կ'ըսուի, որ պատմութիւնը ինքզինք կը կրկնէ: Դատապարտուած չենք կրկնելու անցեալի սխալները՝ եթէ սորվինք մեր փորձառութենէն:

Հայրենիք...

Այսօր երկիրը ծանրաբեռնուած է արտաքին, թէ ներքին բազում դժուարութիւններով, որոնք կը սպառնան նոյնիսկ հայ ժողովուրդի գոյութեան հիմքին. իշխանութիւնը եւ իր վառած անողնաշար քաղաքականութիւնը երկիրը մատնած են Հայաստանի Ա. Հանրապետութեան առաջին վարչապետ Յովհաննէս Բաջաճոյանի բառերով՝ «անձեւ քառս»ի:



Քառսային այս դրութեան մէջ ներքին եւ ազգային կուսակցութեանց բաժանումները անխուսափելի էին: Որոշապէս այս պատճառով ալ 1918-20-ի Հայաստանի Հանրապետութեան փորձառութիւնը հիմնական կարեւորութիւն ունի մեր ներկային համար:

Անկեղծ յուզումով մը թող ազգովին ինքնամփոփուինք, ոգեկոչենք ու այդ պահէն տեք արդար ընդվզումով արձանագրենք ու քաջութեամբ յայտարարենք. -

Քուն թէ արթուն, որոնելով միայն ու միայն քու ճղճիմ շահը, քու կուշտ փորդ ու ո՛չ անելին, կորսնցուցած ես պատմութիւնդ, հայրդ ու պապերդ ու դարձած թրքամետ՝ յիշելով մոռցած հայոց եղեռնամատեաններդ, հայոց հարց, - պահանջատիրութիւն մտքիդ մէջ գոյութիւն չունի, - չըսելու համար սրտիդ ու հոգիիդ մէջ, ազգդ կը ծառայեցնեն անձնական շահերուդ եւ ոչ հակառակը:

Զկայ այն ընդհանուր աշխարհայեացքը, որ կը շողկապէ իշխանութիւնները ընդդիմութեան, մտաւորականութեան եւ ամբողջ հասարակութեան:

Խօսքը գաղափարական ու գաղափարախօսական հակասութիւններու մասին չէ, այլ՝ ապագա գաղափարական մթնոլորտի: Երբ չկան համախմբող խտելիներ, ռազմավարութեան մշակման խնդիրը արհեստական է ու անպտուղ:

Այստեղ պիտի ծնի ազգ-պետութեան կենսագործութեան ռազմավարութիւնը:

Այլապէս՝ ո՛չ նախագահներու, ո՛չ կառավարութիւններու փոփոխութիւնները, ո՛չ կառուցուածքային տեղաշարժերը, ո՛չ վերէն կատարուած կարգադրութիւնները, կամ վարիւններու ընդվզումները կը շտկեն վիճակը:

Ինքնուրոյն կառավարման եւ կառուցողական գործընթացներու ծաւալման խնդիրը կը մնայ ամենէն լուրջ հիմնահարցը:

Կառավարութեան որոշումները պետք է անելի յենին ազգային շահերուն, քան թէ արտաքին ազդեցութեանց կամ ճնշումներուն հպատակին:

Ճակատագրական բնոյթ ունեցող երեւոյթները դիմակալել հայկական միաձայնութեան եւ միութեան սատարող գործելաճ ոգտագործելով եւ ո՛չ հակառակը:

Ուրեմն անհրաժեշտ է նախ եւ առաջ ստեղծել իրական եւ շօշափելի ազգային դիմագիծ ունեցող իշխանութիւն:

Հաստատելով՝ թէ վարչակարգային հիմնական փոփոխութեան բովէն

անցնող որեւէ երկիր, բնական է, որ քանի մը տարի ենթարկուի քաղաքական, տնտեսական ու ընկերային ցնցումներու: Հայաստանը չէր կրնար բացառութիւն ըլլալ:

Ամեն մէկ սփիւռքահայ եւ ամեն մէկ սփիւռքահայ կազմակերպութիւն ամեն զոհողութիւն յանձն պիտի առնէ՝ օգնելու եւ թէթեցնելու համար հարեւնի ժողովուրդին նիւթական եւ բարոյական բեռը:

Այո՛, որովհետեւ այլեւս Սփիւռքը ստացած է իր ուրոյն դիմագիծը: Հետեւաբար՝ Սփիւռքն ու սփիւռքահայը պիտի շարունակուին ըլլալ որպէս իրական ու կենդանի միաւորներ:

Արդի Սփիւռքը արդիւնքն է իր աշխարհաքաղաքական փորձառութեան: Պետք է պահպանել զայն որպէս ազգային ինքնայատուկ մէկ ամբողջութիւն:

Պետք է պահպանել զայն որպէս յենարան Հայաստանի՝ կարելու որ դեր ապահովելու համար Հայաստանի համաշխարհային թատերաբեմին վրայ ու Հայ Դատը միշտ միջազգային ատենաներէն ներս լուսարձակի տակ պահելու համար:

Ուրեմն, Սփիւռքի հետ՝ Հայաստանի համար, Հայաստանի հետ՝ Սփիւռքի համար:

ԳԻՏԷՐ...

Սկիզբ՝ էջ 12

Կամ
«Այս պահին տեղի է ունենում Նիկոլ Փաշինեանի եւ Իլիամ Ալիեւի հերթական յանցանոր պայմանաւորութեան գաղտնագրութիւնը: Վերջիններս շատ արագ եւ միաժամանակ արձագանգեցին ԱԺ-ում ընդդիմադիր պատգամաւորների յայտարարութեանը, որ մեկնում ենք Արցախ եւ անցակէտին փոխանցեցին Արցախ մեկնող քաղաքական գործիչների անունները՝ պահանջելով թող չտալ մեր մուտքը Արցախ»:

«Բացայայտուեց Արցախը մեկուսացնելու, այնուհետեւ հայաթափելու դաւադիր գործարքի հերթական փաստը»:

Այլ բարեկամուհի մը կը գրէ:
«Աս ի՛նչ «խաղաղութեան» ձգտում է որ կ'ընկճէ, կ'արհւնէ մեզ: Սահմանագատել = հող կորսնցնել»:

Եւ սահանքի մը մէջ ինկած կը կորսնցնենք, կը կորսնցնենք ...

Յետոյ
«Շաբաթ, 9 Ապրիլ 2022-ին, «Ուլթան Աւայան» հաղորդեց, որ երեկոյեան ժամը 6:45-ին, Իսրայէլ բազմաթիւ հրթիռներ արձակեց Լիբանանի հիւսիսային շրջաններէն սուրիական «Մսիաֆ» շրջանին ուղղութեամբ: Սուրիական հակաօդային պաշտպանութեան համակարգերը դէմ դրին հրթիռներուն եւ վար առին անոնց մեծամասնութիւնը: Արդիւրը անեցուց, որ յարձակումին հետեւանքով արձանագրուեցան նիւթական վնասներ»:

Տակաւին Աֆղանիստանի եւ Եմենի փոքրերուն վիճակն ու ժողովուրդին սովահարութիւնը:

Պիտի ըսեք՝ լաւ բան չկա՞յ:
Կայ՛:
Հայկական Սփիւռքի չափաքննութիւն
Կամ

«Լաւագոյն բաժինը հայկական հին գործերու մասնագետ ըլլալուն այն է, որ երբեմն մէկը քեզի կ'ուղարկէ ընտանեկան մասունք մը: Անհատական գիւղական գորգ մը գիս անելի կը խանդավառէ, քան լաւագոյն աշխատանքի արտադրութեամբ գորգ մը: Հայերը միշտ գորգ հիւսած են տխուր թէ ուրախ դէպք մը յիշատակելու համար: Բոլոր նախշերը իմաստ ունին: Մարդ պետք է մշակոյթը իմանայ, որ կարենայ հասկնալ այդ հին գործերուն արժէքը»:

Հարցը այն է սակայն, որ որքան ալ լաւ բաներ պատահին այսօր մեր օրերուն մէջ, երբ մեր հողերը կը սասանին, երբ այն, որուն վրայ ամբողջ կեցած ըլլալ կը կարծէինք, բայց կը տեսնենք որ չենք, երբ ամեն օր նոր չարիք մը կը բացայայտուի մեր երկրին համար, ինչպէ՞ս կրնանք «լաւ բաներ»ով գոհ ըլլալ եւ ապրիլ մեր առօրեան այնպէս, ինչպէս կարծես բան մըն ալ չէ պատահած կամ պիտի չպատահի:

Եւ ոչինչ կ'ընենք:

Այս ոչինչ ընելը կապուած չէ մեր ընել-չընելուն, մեր ուզել-չուզելուն, այլ կը բխի մեր անկարողութեան զգացումէն, որովհետեւ երկար ատեն ապրած ըլլալով որոշ ռեժիմներու մէջ, կորսնցուցած ենք մեր հաւատքը ժողովուրդին ուժին հանդէպ. փաստօրէն ի՛նչ ալ ընենք, արդիւնքի չենք հասնիր, որովհետեւ արդէն լկտիօրէն մեզի կը հասնեն, որ մենք իրենց հաճոյք տուող խամաճիկներ ենք ընդամենը, այո՛, ազատ ենք թերեւս բարձրաձայն, նաեւ բեմերէն խօսելու, բայց հոն ալ կը վերջանայ մեր ազատութիւնը եւ կը սկսի իրենց գուարճանքը ... մեզմով:

Ի՞նչ ընել:

Շատ յոռետեսական է, մանաւանդ Աւագ Շաբթուան համար, որուն վերջաւորութեան Սուրբ Չատկի ամառու բոլորս ալ գիրար շնորհաւորեցինք ըսելով՝ **Քրիստոս Յարեալ ի մեռելոց**:

Երանի՛ր մեր աշխարհին ալ յարութիւն առնէ եւ բոլորս, ես ալ մէջը ըլլալով ամօթ զգամ իմ յոռետեսական մտածումներուս համար: Երանի՛ր հրաշք մը ըլլայ ու ես բոլորէն անելի բարձրաձայն աղաղակեմ:

«Օրինեալ է յարութիւնը մեր ամբողջական երկրին»:

ՍՈՒՐԻՈՅ ՀԻՄՆՈՒ
ՀԱՅԱԲՆԱԿ ՇՐՋԱՆՆԵՐԸ



Կարո Վ. Մանուկյան

Հայոց Մեծ Եղեռնին ճողոպրած ու սուրիական անապատի թրջական սպանդանոցներին ազատած հայու բեկորները տեղափոխված կառավարական ճանապարհին վրայ գտնուող շրջաններում, ավաններում մեջ: Անոնք սփռված էին, Սուրիոյ Հիւսիսի Թուրքիոյ սահմանին վրայ գտնուող գոտիին մեջ:

Արեւմտեան Հայաստանի արեւելեան շրջաններին տարհանումները կը տեղակայուէին ու ապաստան կը գտնէին Սուրիոյ Ռաքքա եւ Հասիչէ նահանգներուն հիւսիսը:

Յիշենք անոնցմէ Գամիշլին ու Տերիքը, Տըրպէսիէն եւ մերձակայ գիւղերը ու անելի հեռուն դէպի արեւմուտքի շրջանները՝ Ռաս Ռւլ Այն, Արաբունար (Այն Արապ), Թէլ Ապիատ, Ճարապլոս... եւ այլն:

Շատեր գացին հաստատուելու Հալէպ, որ տարագրեալ հայութեան կարաւաններուն հանգույցն ու խաչմերուկն էր ու դարձած էր Հայոց որբանոց-պատասպարանն ու այրիանոցը:

Տեր Զօրի թրջական սպանդանոցի ճամբուն վրայ գտնուող Հալէպ հասած էր Կարինի, Խարբէրդի ու Նոյնիսկ Կիլիկիոյ հայկական բնակավայրերին տեղահանուած հայերու հոծ բազմութիւն:

Աւելի ուշ, Ֆրանսա-քեմալական Թուրքիա սիրաբանութեան որպէս արդիւնք, երբ Կիլիկիան նուաճուեցաւ Թուրքիոյ, հայկական Կիլիկիան դատարկուեցաւ հայութենէ: հայութեան ստուար մասը հաստատուեցաւ Հալէպ ու անոր հիւսիսը կամ հիւսիս-արեւելք գտնուող Ազազ, Աֆրին, մասամբ Պապ եւ Մուսայուն, եւ շօշափելի թիւ մը Հալէպ, թէեւ ոմանք հասան մինչեւ Լիբանան ու ապա անելի հեռու՝ արեւմուտքի երկիրներ:

Սուրիոյ հիւսիս-արեւելքի հայկական գիւղերն Քեսապի, Եագուպիէի, Ղընէմիէի... թէեւ նօսրացած թուաքանակով, բնակչներու բեկորները, ֆրանսական իշխանութիւններու Սուրիոյ վրայ տիրապետութիւն բանեցնելէ ետք վերահաստատուեցան իրենց շրջաններուն մէջ:



Վերոյիշեալ ամէն շրջաններուն մէջ հաստատուած ու վերահաստատուած հայութիւնը շուտով դուրս եկաւ իր գաղթականի վիճակէն: Կազմակերպեց իր կենցաղային, տնտեսական, կրթական... կեանքը:

Սուրիոյ ժողովուրդին եւ ֆրանսական հոգատարութեան ներքեւ գործող իշխանութիւններուն բարեացակամ վերաբերումը ունեցաւ իր դրական արդիւնքը, որպէսզի հայութիւնը շուտով դուրս գար իր գաղթականի վիճակէն:

Սակայն թրջական շարունակուող խժոճութիւններուն որպէս արդիւնք, այս անգամ Թուրքիոյ քրտական հաւաքականներուն հանդէպ, քրտական վաչկատուն ցեղախումբեր յաջորդող տասնամեակներուն եկան հաստատուելու հայ-արաբ խառն բնակչութեամբ բնակուած շրջաններուն մէջ, ուր թրջական ետքադանը անհասանելի էր ու ապահովութիւն կը տիրէր:

Թրջական հակաքրտական բռնութիւնները երկու բան կը նպատակադրէին:

Նախ Թուրքիա կ'ազատէր քիւրտ մեծամասնութեամբ բնակուած շրջաններէն, անոնք կը դատարկուէին եւ պետութիւնը կանխած կ'ըլլար գալիք գլխացաւ մը՝ գանոնք հեռացնելով, երկրորդ կարեւոր նպատակը այդ սահմանագիծի գօտին տեղափոխուած հայութիւնը կը հակակշռէր այդ վաչկատուն ու թափառաշրջիկ խումբերով, անոնք՝ հայերուն տեղը նեղցնելով:

Քրտական հոսքը դէպի Սուրիա սկսաւ 1923-1927 քրտական ապստամբութիւններով Թուրքիոյ դէմ ու շարունակուեցաւ մինչեւ Բ. աշխարհամարտ, իսկ վերասաստկացաւ 1961-ին Թուրքիոյ մէջ տեղի ունեցած քաղաքական հակամարտութիւններու որպէս արդիւնք կատարուած պետական յեղաշրջումին պատճառով:

Սահմանագօտիի հայութեան վրայ իր ժխտական անդրադարձը ունեցաւ նաեւ Սուրիոյ տնտեսաքաղաքական անկայունութիւնը, որ շարունակուեցաւ մինչեւ 1970 թուականը՝ (Նախագահ զօր. Հաֆէզ ալ-Ասատի իշխանութեան գալու թուականը): Սուրիա-Յրեաստան պատերազմներուն որպէս արդիւնք երկարաժամկետ գիւնդարական ծառայութիւնն ալ սուրիական բանակին մէջ ժխտականօրէն անդրադարձաւ այնտեղ ամրացած հայութեան վրայ, որ մերթ քմերթ տեղափոխուեցաւ Հալէպ, Լիբանան եւ անելի հեռուներ:

2011-ին սկսած սուրիական 11-ամեայ տագնապը, ուր Թուրքիա անմիջական դերակատար էր որպէս այդ ահաբեկչական խմբաւորումներու ինսամատար ու զինող ուժ, եկաւ հանգելու Թուրքիոյ կողմէ այդ սահմանագօտիի բռնագրաւման (ցայսօր), ու վերջնականապէս հայաթափեց այդ շրջանները Նոյնիսկ մնացած բեկորներէն:

Սուրիոյ Իսլիլիկ նահանգի պարագային անդրադառնալով, Թուրքիա իր բանակի ներխուժումով Ազազ ու Աֆրին քաղաքներուն մէջ՝ հայերու գոյութեան վերջնակետը ամրագրեց:

Այստեղ չենք ուզեր մանրամասնութիւններ տալ միջնադարուն հայա-

հոծ Ռուճի հովիտի հայութեան մասին (որուն բանասեր-հայագետ դոկտ. Յակոբ Զոլաքեան ուսումնասիրական ծաւալուն հատոր մը նուիրած է): Այնտեղ Շուրուր ավանին մէջ (մերօրեայ ճըսըր-Շուրուրի արեւմուտքին գտնուող), Հայ Առաքելական Եկեղեցին առաջնորդարան ունեցած էր, սակայն կ'ընդգծենք, որ հոն մնացած էր հայկական, սակայն արաբախօս Եագուպիէ գիւղը, ինչպէս լատինացած Գընէյթ ու Ճըտէտիան, որոնց բնակչութիւնը յոյն-ուղղափառութիւնը կը դաւանէր: Այդ գիւղերն ալ 2011-ի տագնապին պատճառով թթափուեցաւ իրենց բնակչութենէն ու թրջական իշխանութիւնները այնտեղ բնակեցուցին արաբ ու թուրքմէն ընտանիքներ:

Այստեղ կ'ընէմ, որ 2012-2013-ին բռնագրաւուած Եագուպիէն տեղահանուած Եագուպիացի ընտանիքներ (անելի քան տասնեակ մը) եկան հաստատուելու Քեսապ ու 2014-ին քեսապցիներուն հետ տեղահանուեցան, երբ թրջական ահաբեկչական խումբերը ներխուժեցին Քեսապ: Անոնցմէ 5-6 ընտանիքներ ցայսօր կը շարունակէն բնակիլ ազատագրուած Քեսապի մէջ, մինչ Եագուպիահայերուն մեծ մասը տեղափոխուած է Լաթաքիա, Հալէպ ու այլուր:

Եագուպիահայերու հայեացքը թէեւ սեւեռած է իրենց ծննդավայրին վրայ, սակայն անոնք վստահ չեն, թէ պիտի կարենան վերադառնալ իրենց գիւղը:

Այսօրուան դրութեամբ, Սուրիոյ հիւսիսի Թուրքիոյ հետ սահմանագօտին, բացի Քեսապի վարչական շրջանի սահմանագիծի 20-25 քմ. -էն, մինչեւ Ռաքքա նահանգի սահմանագօտիի մեծ մասը, 20-30 քմ. լայնքով տիրապետուած է Թուրքիոյ եւ կամ իր վարձկան խմբաւորումներուն կողմէ, եւ հայաթափուած, իսկ քրտաբնակ շրջանները, իմա՝ քիւրտերը, ենթակայ են ամէնօրեայ ու հետեւողականօրէն կիրարկուած թրջական բռնութիւններուն ու խժոճութիւններուն:

Ընդգծելի է նաեւ, որ Հասիչէ նահանգին մէջ տեղակայուած են Ամերիկեան բանակի յենակետեր (հասնելով մինչեւ Իրաքի սահմանը), եւ անոնց՝ ամերիկացիներուն նեցուկը վայելող քրտական խմբաւորումներ շրջանը դուրս բերած են սուրիական պետութեան ենթակայութենէն, (բացի Գամիշլի քաղաքի կարգ մը թաղեր, Գամիշլիի եւ Տերիք գիւղի մէջ տակաւին կը գոյատեւէ նօսրացած թիւով հայութիւն):

Որպէս եզրակացութիւն հաստատենք, որ Թուրքիա յաջողած է ուղղակի թէ անուղղակի միջամտութիւններով հայաթափել այդ շրջանները ու հիմա հետամուտ է քրտաթափելու գանոնք՝ ի գին ամէն տեսակ բռնութիւններու:

Մօտաւորապէս 900 քմ. երկայնք ունեցող այդ սահմանագիծին վրայ հայաբնակ մնացած են Քեսապն ու Գամիշլին ու գուցէ վերջինիս մերձակայ Տերիքը:

Իսկ ի՞նչ ապագայ վերապահուած է այդ երկու շրջաններուն, տակաւին շարունակուող սուրիական տագնապին գծով մարդ ոչինչ կրնայ կռահել: Այդ ապագան կախեալ կը թուի մեծապետական խաղերէն ու համաձայնութիւններէն, ուր պակաս դերակատար չեն շրջանային ուժերը, իմա՝ իր նախկին կայսրութիւնը վերականգնելու փորձեր կատարող Թուրքիան:

Իսկ մնացած բնակավայրերու հայկական հաւաքականութիւնը որքա՞ն կրնայ դիմանալ այդ պայքարի բազմերես խաղերուն...:

Յիշողութենէ չվրիպելու համար ընդգծենք, որ Նախորդ տասնամեակին, Թուրքիա Սուրիոյ հետ մօտ 900 քմ. երկայնք ունեցող սահմանին վրայ կառուցած է անելի քան 3 մէթր բարձրութեամբ փշալարերով պատ մը, որ գրութեան մը մէջ անուանած էի ամօթի կամ վախի պատ:

Աւելցնեմ նոր նկատուած երեւոյթ-իրողութիւն մը, որ Թուրքիա Քեսապի հիւսիսարեւմտեան կողմը գտնուող Նախկին Պաշուրտ գիւղին դիմացը (Գարատուրան գիւղին հանդիպակաց), սահմանամերձ վայրին վրայ տեղադրելով Նախկին կառուցուած շարժական տնակներ, բերած ու հաստատած է թուրք վաչկատուն հօտառած բնակիչներ, անոնք շինելով Նոյնիսկ մզկիթ մը, որուն նամագի կանչը կը լսուի Գարատուրան գիւղէն:

Ի՞նչ նպատակ կը հետապնդէ Թուրքիա: Խաղաղութիւն: Գուցէ թրջական, իւրայատուկ, արիւնախառն խաղաղութիւն:

Թուրքերուն ու Թուրքիոյ հետ դարերու շփման լոյսին տակ հայութիւնը ինչպիսի՞ յարաբերութեան անցեալ ունեցած է: Թուրքիա ինչպիսի՞ վերաբերում ունեցած է հայութեան հետ Նախքան Մեծ Եղեռն ու յետ-Եղեռնի տարիներուն:

Պատմութիւնը դառնօրէն կը փաստէ, որ անցեալէն ցայսօր, Թուրքիա իր բազմազոյն վերնախաւերով (Օսմանեան, երիտ-թրջական, քեմալական, մերօրուան՝ Երտողանեան...) ոչ մէկ պահու, ոչ մէկ ակնթարթ հաշտ աչքերով դիտած է հայութեան:

Անոնք խաղաղութիւն կոչուածը միշտ եղած է արնաթաթախ:

Եւ երեւակայել, որ Հայաստանի մերօրեայ իշխանութիւնները, ի գին Արցախի, Սիւնիքի, Սփիւռքի խաղաղութիւն պիտի սարքեն թուրքին հետ ու հայութիւնը խաղաղութեան այս «հեքիաթը» կուլ պիտի տայ... ցնորք է:

Ես ասորի միամտութիւն չեմ ըսեր, այլ անմտութիւն կամ դաւամտութիւն...:

Տողերուս անարտին, յետադարձ ակնարկով մը մեր պատմութեան վրայ, երբ կը փորձեմ երեւակայել, թէ ի՞նչ ճակատագիր կը սպաննայ Հայաստանին, Արցախին, հայութեան իր հատուածներով, մարմնէս ու հոգիէս սարսուռ մը կ'անցնի:

Օր մը ըսին «սպագայ կայ, կայ սպագայ»... ի՞նչ ապագայ... թրջական...:

Այդպիսի անուրջն իսկ սարսափազդու է, նուազագոյն ու տարրագոյն ազգային նկարագիրն ու ապրումը ունեցող հայուն համար:

Մեծանուն գրագետ Աւետիս Ահարոնեան իր «Ազատութեան ճանապարհին» գրքի «Խայր» պատմութեան մէջ «Խայր» շուրթերուն վրայ տեղաւորեց մէկ նախադասութիւն. «Ես չեմ հաւատար ճակատագրին»: